

15092

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

963

ՃԱՊՈՆ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ-  
ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ  
ՎՆԱՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ,  
ԴԻՎԵՐՍԻԱՆԵՐԻ ՅԵՎ  
ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

32(47)

Մ-86

ՀԱՅԿՈՒՍՏՐԱՏ • ՅԵՐԵՎԱՆ • 1937



2/2







26 SEP 2006

2512-09

2(42)

86

Վ. Մ. ՄՈՒՆՏՈՎ

Այ



ՃԱՊՈՆ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ-ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ  
ՎՆԱՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԴԻՎԵՐՍԻԱՆԵՐԻ  
ՅԵՎ ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

363

~~1937~~

ՀԱՅԿԱՆՍՏԱՆ

1937

ՅԵՐԵՎԱՆ





В. М. МОЛОТОВ

УРОКИ ВРЕДИТЕЛЬСТВА, ДИВЕРСИИ И ШПИОНАЖА  
ЯПОНО - НЕМЕЦКО - ТРОЦКИСТСКИХ АГЕНТОВ

Армипартиздат, Ереван, 1937

ՎՆԱՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐԸ ՅԵՎ  
ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄՔԸ

Անցյալ տարի մեր արդյունաբերությունը գերակատարեց իր առաջադրանքները: Ծանր արդյունաբերությունը գերակատարել է իր արտադրական պլանը վո՛չ միայն անցյալ տարում, այլև վերջին յերեք տարիներում: Հայտնի յե նույնպես, վոր ծանր արդյունաբերությունը, չնայած տրոցկիստական-ֆաշիստական դործակալների դիվերսիոն-վնասարարական աշխատանքին, վո՛չ միայն կատարեց առաջին հնգամյակը չորս ու մի քառորդ տարում, այլև նա արդեն բոլորովին մոտ է յերկրորդ հընգամյակի պլանը կատարելուն (1936 թվին կատարված է յերկրորդ հնգամյակի վերջին տարվա ծրագրի 98,3%-ը): Յեվ այնուամենայնիվ ներկայումս մենք պետք է բացառիկ լուրջ ուշադրություն կենտրոնացնենք՝ մեր արդյունաբերության մեջ ճապոն-գերմանական-տրոցկիստական դործակալների կատարած վնասարարության, դիվերսիաների և լրտեսության հետևանքները վերացնելու հարցերի վրա, — դործակալներ, վորոնք քիչ վնաս չեն հասցրել ժողովրդական տնտեսությանը:

Ծանր արդյունաբերության մեջ, ինչպես և յերկաթուղային տրանսպորտում կատարվող վնասարարությանը և դիվերսիաներին տրոցկիստական և ոտարեերկրյա լրտեսական դործակալությունը մեծ նշանակություն էր տալիս: Յեվ այդ հասկանալի յե: Թչնամին ձգտում էր հարվածել ժողովրդական տնտեսության ու պաշտպանության համար առավել կարևոր ու զգալուն տեղերին:

Մենք դեռևս չգիտենք բոլոր այն փաստերը, վորոնք վերաբերում են ծանր արդյունաբերության ու մեր պետապարատի մյուս մասերում տրոցկիստական և այլ դործակալների կատարած վնասարարական-դիվերսիոն դործունեյությունը: Բայց



հենց մեր իմացածն էլ բավական է խոսելու համար այն լուրջ վնասի մասին, վոր նրանք հասցրել են ժողովրդական տնտեսությանը և մասնավորապես ծանր արդյունաբերությանը:

Խոսելով Ծանր Արդյունաբերության ժողովրդամտում գոյություն ունեցած վնասարարական բանդայի մասին, ամենից առաջ հարկավոր է կանգ առնել Պյատակովի վրա: Պյատակովը, Ծանր Արդյունաբերության ժողովրդի նախկին տեղակալը, ծանր արդյունաբերության մեջ աշխատել է ավելի քան տասներկու տարի՝ փոքր ընդմիջումներով: Նա քիչ յուրաքանչյուր չունեւ Ծանր Արդյունաբերության ժողովրդամտում: Նա ծանր արդյունաբերության մեջ յեղած հանցադործ չայկայի վնասարարական-դիվերսիոն աշխատանքի գլխավոր կազմակերպիչն էր:

Ահա թե ինչ ցուցմունք է տվել Պյատակովն այդ աշխատանքի մասին.

«Իմ պաշտոնական դիրքը—Ծանր Արդյունաբերության ժողովրդի տեղակալի դիրքը—ավելի հնարավորություններ էր տալիս ինձ իմ հակահեղափոխական աշխատանքը կառուցելու առաջին հերթին ժողովրդական տնտեսության մեջ վնասարարություն կատարելու վերաբերյալ Տրոցկու դիրեկտիվներն իրագործելու ուղղությամբ:

Այդ ուղղությամբ ստեղծվում էյին նաև անձնական կապերը հարկավոր մարդկանց հետ:

Ուստի յես իմ աշխատանքը կառուցում էյի, յենելով հետևյալ սկզբունքներից.

1) Յես ինձ համար մարդիկ էյի ընտրում արոցկիստներից, խոշոր տնտեսավարներից: Նրանց առաջ էյի քաշում, ուղարկում էյի ինքնուրույն աշխատանքի՝ համապատասխան արդյունաբերական կենտրոնները կամ ղեկավար աշխատանքի՝ Մոսկվայում:

2) Այդ մարդկանց յես առաջադրանքներ էյի տալիս (իհարկե, նրանց իրազեկ էյի դարձնում Տրոցկու դիրեկտիվներին) իրենց համար ինքնուրույն կերպով ուրիշ մարդիկ ընտրելու (վո՛չ միայն արոցկիստներ) և իրենց ճակատամասերում աշխատանքի վիժեցման գիծ տանելու:

3) Յես իմ մարդկանց խորհուրդ էյի տալիս (և ինքս էլ այդ անում էյի) ցրվի չգալ իրենց վնասարարական աշխատանքում, կենտրոնացնել իրենց ուշադրությունն արդյունաբերության այն հիմնական խոշոր որյեկտների վրա, վորոնք պաշտպանական և համամիութենական նշանակություն ունեն:

Այդ կետում յես դործում էյի համաձայն Տրոցկու այն դիրեկտիվի, թե պետք է զգալի հարվածներ հասցնել առավել զգայուն տեղերին»:

Այս է Ծանր Արդյունաբերության ժողովրդամտում կատարված վնասարարության և դիվերսիաների գլխավոր ղեկավարի դիրքավորումը: Նա ունեւ Տրոցկու առաջադրանքը՝ հարվածել սոցիա-

լիստական տնտեսության ամենազգայուն տեղերին և այդ անում էր վո՛չ մի բանի առաջ կանգ չառնող՝ լիտի վոճրագործի ցինիզմով: Ձի կարելի է չընդունել, վոր ճշմարիտ շատ բան կա Պյատակովի այն խոսքերում, թե նա վնասարարության լայն հնարավորություններ ունեւ ծանր արդյունաբերության ապարատում: Այդ բանն աչքաթող անելով, մենք մեծ սխալ ենք գործել: Դրանից մենք պետք է լուրջ դաս վերցնենք ապագայի համար:

Տրոցկիստական բանդային և ոտարերկրյա դործակալությանը պատկանող վնասարարները, դիվերսանտներն ու լրտեսները Ծանր Արդյունաբերության ժողովրդատի ղեկավար պոստում իրենց մարդն ունենալով, մեծ հնարավորություններ էյին ստանում իրենց մարդկանց տեղավորելու գլխ. վարչություններում, արեստներում և ձեռնարկություններում: Արդեն այժմ մերկացված են կուստոմա ունեցող մի հարյուրից ավելի՝ տնտեսական ղեկավարներ, ինչպես նաև «անկուսակցական» ինժեներներ ու տեխնիկներ, վորոնք պատասխանատու պոստեր էյին զբաղել Ծանր Արդյունաբերության ժողովրդատի հիմնարկներում և մի շարք տարիներ ընթացքում այդտեղ հանցավոր, վնասարարական աշխատանք էյին կատարում: Պետք է ցանկանալ, վոր մեզ հաջողվի շուտափույթ կերպով և մինչև վերջը արմատախիլ առնել արդյունաբերությունից այդ վոճրագործ բանդայի բոլոր ճյուղավորությունները:

Անցնեմ ծանր արդյունաբերության առանձին ճյուղերին: Սկսեմ քիմիայից:

Նախ և առաջ մեջ բերեմ նույն Պյատակովի ցուցմունքները.

«Քիմիական և կոքսա-քիմիական արդյունաբերության մեջ կատարվել է հետևյալ վնասարարական և դիվերսիոն աշխատանքը.

1) Կազմվել, ներկայացվել ու ձևակերպվել է ռազմական քիմիայի զարգացման մի պլան, վորն իրականում տանում էր դեպի այնպիսի դրություն, յերբ միջոցները փոշիանում էյին և մնում էյին մեռած վիճակում ու հարկավոր որյեկտները չահագործման հանձնելու ժամկետները ձգձգվում էյին:

2) Ազոտի արդյունաբերության բնագավառում ձգձգվում էր նոր որյեկտներ շինարարությունը, գլխավորապես նրանց նախագծերը սխառեմատիկ ու յերկարատև վերափոխումների յենթարկելու միջոցով:

3) Ծծմբաթթվի արդյունաբերության մեջ իսկական կարողությունները վիժեցվում էյին շահագործական կոեֆֆիցիենտներն իջեցնելու միջոցով:

4) Սոդայի արդյունաբերության մեջ կասեցվում էր կարողության զարգացումը, վորի հետևանքով սոդան,—վորը կարող էյին իՍՍՏ-ում



արտադրել միանգամայն անսահման քանակությամբ,— չարունակ սուբ-  
զեֆերտային պրոդուկտ ե յեղել: Բացի դրանից, չեթ թույլատրվում  
սորգայի նոր կենտրոններ ստեղծելը՝ հումքի համապատասխան աղբյուր-  
ների բազայի վրա (որինակ՝ կալիումի արդյունաբերության արտադրա-  
կան միացությունների կամ Ուսուլյայի (Սրեմոյան Սիրբի) աղի աղբյուր-  
ների բազայի վրա): Քիմիական և կոբալտ-քիմիական արդյունաբերու-  
թյան մեջ սրանք են այն վնասարարական աշխատանքի հիմնական վա-  
տերը, վոր իմ առաջընթացով կատարում եր Ռատայակը»:

Պլատակովին, իհարկե, չի կարելի հավատալ, թե նա ասել  
է այն ամենը, ինչ նա գիտեր քիմիական և այլ արդյունաբերու-  
թյան մեջ կատարված վնասարարության մասին: Ընդհակառա-  
կը, կարելի յե վստահ լինել, վոր նա ամենևին ել չի ասել այն  
ամենը, ինչ վոր նա գիտեր և կարող եր բաց անել վնասարարա-  
կան-գիվերսիոն աշխատանքի բնագավառում:

Լրացնենք այս ցուցմունքները Կեմերովոյի քիմիական կոմ-  
բինատի վերաբերյալ Դորոնիսի տված ցուցմունքներով: Դորոնի-  
սը տվել ե հետևյալ ցուցմունքը.

«Մենք չափազանց շատ եյինք վնասում և կործանում: Ինձ համար  
դժվար կլինի խոսել առանձին մանրամասնությունների մասին, բայց  
քայքայիչ աշխատանքում ունեցած մեր հիմնական դժի և իմ հիշողու-  
թյան մեջ մնացած՝ կործանումների ալելի խոշոր ակտերի մասին յես  
կպատմեմ:

Իմ, Կեմերովոյի քիմկոմբինատի պետ Նորկինի, քիմկոմբինատի  
տեխնիկական դժով պետի տեղակալ Կարցեյի կատարած կործանիչ աշ-  
խատանքը, սկսած 1925 թվից մինչև իմ ձեռնարկության ընդ-  
դրկել եր Կոբալտ-քիմիական դործարանը, Աղոտա-պարարտանյութերի  
դործարանը, Ջերմակերպողոցները և բնակարանային շինարարու-  
թյունը:

1. 1935 թվի առաջին կեսի ընթացքում մեր կործանիչ աշխատանքը  
հանդուժ եր այն բանին, վոր ամեն կերպ խոչընդոտ հանդիսանալ աշ-  
ափնյա շինարարության, այսինքն, պաշտպանական նշանակություն ու-  
նեցող մասնագիտական քիմիայի շինարարության, մի շարք ձեռնար-  
կությունները ժամկետին չահադործման հանձնելուն:

Այդ նպատակով մենք գիտակցաբար կասեցնում եյինք ելկտրակա-  
յանի նախագծումը: Մեր պլանով նախատեսված այդ աշխատանքը կա-  
տարում եր գլխավորապես Կարցեյի Մոսկվայի ու Լենինգրադի նա-  
խագծող կազմակերպությունների միջոցով:

2. Մենք կասեցնում եյինք նաև մասնագիտական քիմիայի մե աս-  
բող շարք որսկտների նախագծումը:

3. Մասնագիտական քիմիայի որսկտներում այնպիսի քայքայիչ  
աշխատանք կատարվեց, վոր ըստ սկզբնական նախագծերի գրվեցին մի  
շարք շենքերի հիմքեր. այդ շենքերի համարներն այժմ յես չեմ հի-  
շում, բայց հեռու նախագծերն անպիտվեցին (забракваны), և այդ շեն-

քերի հիմքերը հարկ յեղավ քանդել: Նույնիսկ շենքերից մեկի պատերը  
կռուցել եյին, իսկ հետո քանդեցին:

4. Կործանիչ աշխատանքի այդ նույն նկատառումներով, մեր գիտու-  
թյամբ, Կարցեյի 1935 թվին, Մոսկվայում յեղած ժամանակ, անպիտեց  
Աղոտապարտի գլխավոր շենքի նախագիծը, իսկ հետո, մի յերկու ամիս  
անց, մենք ստիպված յեղանք սկսել աշխատանքն ըստ այդ նախագիծի:

5. 1936 թվի յերկրորդ կեսին մենք կազմակերպեցինք մի շարք ա-  
վարիաներ: Ամենախոշորներից եյին ամսերկտրայում և մոնտան-սկիտ-  
բայում կատարած ավարիաները:

Այնուհետև նշեմ Գոռովկայի աղոտա-պարարտանյութերի  
կոմբինատի տեխնիկական գերեկտոր՝ վնասարար Ասինովսկու  
ցուցմունքները: Նա ասում եր.

«Գոռովկայի Աղոտա-պարարտանյութերի դործարանում հակահեղա-  
փոխական կազմակերպությունը կատարել ե հետևյալ գիվերսիոն աշ-  
տերը.

1) 1934 թվի մոտավորապես ամբել ամսին շարքից հանվեց ամսե-  
կտրայի ցեխի չեղողացման բաժանմունքը՝ ամսնիսակամուղի պայթե-  
ցումը կազմակերպելու միջոցով: Պայթման միջոցին մարդկային զոհեր  
յեղան: Պայթման հետևանքով ցեխի աշխատանքը կանդ առավ յոթ ուր:  
Վոր տվյալ պայթեցումը հակահեղափոխական կազմակերպություն և  
կատարել, այդ մասին ինձ ասաց Տամմը՝ ինձ կազմակերպության մեջ  
ներգրավելուց հետո:

2) 1934 թվի հոկտեմբերին կազմակերպություն իրագործեց յեր-  
կու կոբալտի կոմպրեսորների պայթեցումը: Դրա հետևանքով դործա-  
բանը կանդ առավ յերկու ժամով, Տամմի ասելով, այդ գիվերսիոն  
տկար կատարել ե խալեզով՝ հակահեղափոխական կազմակերպության  
մեջ նրա ներգրաված նոր անդամների միջոցով: Այդ անձնավորու-  
թյունների անունները Տամմը ինձ չասաց:

3) 1934 թվի նոյեմբերի վերջին հակահեղափոխական կազմակերպու-  
թյունը կատարեց կոբալտ վերդետնյա դադամուղի խորտակումը: Տամմի  
ասելով, այդ խորտակումը կազմակերպել եր կազմակերպության ան-  
դամ խալեզով: Այդ գիվերսիոն ակտի մյուս մասնակիցների անուն-  
ները Տամմն ինձ չասաց:

4) 1935 թվի հունվարին կատարվեց մեխանիկ կոլեկտորի պայթե-  
ցումը: Պայթեցման հետևանքով դործարանը կանդ առավ յերեք ուրով:  
Տամմի ասելով, պայթեցումը կազմակերպել եր նույնպես խալեզով:

5) 1935 թվի նոյեմբերի 11-ին խալեզով և Կրուչնինցկին կադ-  
մակերպեցին ամսնիսակի ցեխի ողային կարիները պայթեցումը: Պայ-  
թեցման հետևանքով դործարանը կանդ առավ յերեք շաբաթ: Վերա-  
կանդման աշխատանքները նստեցին, մոտավորապես, մեկ ու կես—յեր-  
կու միլիոն ուրլի»:

Մեր արդյունաբերության մարտական ճակատամասերում  
նստած վնասարարների ու գիվերսանտների խմբերը մի շարք տա-



«Գործանիչ հարվածները Անժերկայում ուղղվում էին նաև շահագործական աշխատանքների դեմ, ստեղծվում էր այնպիսի դրուժյուն, Վոր հանքարանը դուրս չեր դալիս ճեղքվածքից:

Ամենից առաջ մեխանիզմների շահագործումն այնպես էր կատարվում, Վոր ստեղծվում էին բացառիկ շատ ավարիաներ: Հանքարանը մեքենայված է, և այդ խիստ անդրադառնում էր ամփնի հանույթի վրա:

Մեխանիզմների վրա աշխատելը թուլատրվում էր բոլորովին անվտանգ բանվորների: Կադրեր պատրաստելու աշխատանք չեր կատարվում: Յեթե բրիգադիւրները հրաժարվում էին ընդունել անվտանգ բանվորների, նրանց հարվածում էին այն բանի համար, Վոր նրանք չեն ուզում կադրեր պատրաստել աշխատանքի ընթացքում»:

Այնուհետև կանգ առնեմ պաշտպանութան համար կարևոր արդյունաբերական այնպիսի ճյուղի վրա, ինչպիսին գունավոր մետալուրգիան է: Այն մասին, Վոր Պյատտկովն առանձնապես մոտ է յեղել գունավոր մետալուրգիային և նրա վնասարարական ձեռքն իր գործն է կատարել այդ ասպարեզում, այդ լայն կերպով հայտնի յե:

Ահա թե ինչ ցուցմունք է տվել Պյատտկովը Ուրալի Պղնձարդյունաբերության մեջ կատարված վնասարարության մասին, ուր նա անձամբ քանիցս դնացել էր:

«Նկատի ունենալով Ուրալի պղնձարդյունաբերության հսկայական ժողովրդատնտեսական և պաշտպանական նշանակությունը, վնասարարությունն էլ ուղղվեց դեպի այդ կողմը:

Նախ և առաջ խոսքը վերաբերում էր բանող գործարանների պղնձի ձուլումը կասեցնելուն: Ինձ համար դժվար է ասել, թե այդ աշխատանքն ինչպես էր կատարվում առանձին գործարանների վերաբերմամբ, բայց փաստն այն է, Վոր տրոցկիստական խմբի վնասարարության հետևանքով Ուրալի յերեք գործարաններից ամենահզորը՝ Կրամնոուբալսկի գործարանն ամբողջ ժամանակ չափազանց ցածր վերականգնող ցուցանիշներ ուներ: Կարաբաշյան գործարանն այդ նույն պատճառներով աշխատում էր մշտական խանգարումներով: Կիրովոդարդի գործարանում վնասարարությունը հարված հասցրեց առաջին հերթին հարստացման ֆաբրիկային, և բոլոր յերեք գործարաններն ամենևին էլ չէին տալիս պղնձի այն քանակը, Վոր նրանք կարող են տալ:

Վնասարարությունն առանձնապես ուժեղ էր ծավալված Ուրալի նոր կառուցվող մեծ պղնձագործարանում—Սրեդուրալմեդստրոյում:

Ամենից առաջ մենք ամեն կերպ արգելափում էինք այդ գործարանի կառուցումը: Շինարարությունը, Վոր դեռ 1932 թվին էր սկսվել, 1935 թվի սկզբներին գործնականապես դուրսվում չունեք՝ գտնվելով կատարյալ կազմալուծման վիճակում:

Շինարարության մեջ դեռևս Յուլինը բոլոր աշխատամասերում նստեցրել էր տրոցկիստներին, Վորոնք, յուրաքանչյուրն իր աշխատանքում, Յուլինի ղեկավարությամբ, վիժեցնում էին աշխատանքը:

Յեւր 1935 թվի սկզբին յես յեղած շինարարության վայրում, յես տեսա, Վոր վնասարարությունն այն աստիճան կուպիտ էր ընթանում, Վոր այն աչքի յեր ընկնում նույնիսկ ամենամեկերեսային կերպով գետեկիս: Յես դրանից խիստ անհանգստացա և մատնացույց արի ժարիկովին, Վոր այդպես անել չի կարելի: Յես նրան առաջարկեց արտաքուստ կարգի բերել շինարարությունը և իրեն ավելի զգուշ պահել:

Այդ նպատակով մենք ժարիկովի հետ այն ժամանակ ընդունեցինք վնասարարության ավելի չողարկված մեթոդներ: Մենք պայմանավորվեցինք, Վոր նա «յեռանդ կցուցարբերի», կարգի կբերի շինարարությունը, կսկսի Վորեւս ուրեկտի կառուցում, բայց այնպիսի հաշվով, Վոր այնուամենայնիվ պղնձ չլինի:

Բացի դրանից, հաշվի առնելով Ուրալում պղնձահանքի գործում ստեղծված լարված դրուժյունը, մենք վճռեցինք ե'լ ավելի ձգձգել Դեդստյարինսկի հանքարանների (Սրեդուրալմեդստրոյի հանքային բազա) աշխատանքը: Հատկապես այդ նպատակով 1935 թվի մայիսին յես հրամանով անջատեցի հանքային բազան գործարանի շինարարությունից և այդ բազան հանձնեցի Ուրալմեդուդային: Այս դեպքում նկատի յեք առնվում, Վոր Դեդստյարինսկի հանքարանների համար բաց թողնվող միջոցները կփոխիցվեն Ուրալմեդուդայի մեծ տնտեսության մեջ և Դեդստյարինսկի հանքարաններն արդեւակ կդառնան Սրեդուրալմեդստրոյի աշխատանքին, մինչև իսկ ձեւականորեն այն շահագործման հանձնելուց հետո էլ:

Նույն այդ նպատակով էր կատարվում հանքային բազայի գծով արդյունահանող հատկացումների կրճատումը: Այդ ինձ հաջողվում էր անձամբ անցկացնել՝ Ծանր Սրեդուրալմեդստրոյի ժողովմատի ապարատի միջոցով:

Բացի դրանից, Սրեդուրալմեդստրոյի գծով կատարվել է ես մի շատ լուրջ վնասարարություն:

Յես նկատի ունեմ այն, Վոր միանգամայն բացակայում էր կոմբինատի քիմիական մասի շինարարությունը, Վորը մենք գիտափորյալ կերպով հեռաձգում էինք:

Իսկ այն է, Վոր այդ գործարանը կարող է տնտեսապես շահավետ լինել՝ քիմիական գործարանի հետ համակցված լինելով միայն: Այդպես էլ հենց ծրագրված է Սրեդուրալմեդստրոյը Դեդստյարինսկի հանքերը պղնձի պարունակությամբ շատ աղքատ հանքեր են (մոտ 1%)։ Յեվ յեթե քիմիական գործարանը չողտարծի դրանց մեջ պղնձակալող ծծումբը, ապա՝ 1) այդ չափազանց կթանաղացի պղինձը, 2) պղնձի գործարանի ծծմբային գնդերը կթանաղորեն չընկա վայրը:

Հենց այդ պատճառով էլ Սրեդուրալմեդստրոյը պետք է կառուցվեր վորպես համակցված ձեռնարկություն: Իսկ մենք վնասարարական նպատակով չհամակցեցինք: Քիմիական մասը հանձնեցինք Գլավխիմպրոմին, վորտեղ Ռատոյչակը քնեցրեց այն: Հետևանքն այն յեզավ, Վոր կառուցվում է (և այն էլ վնասարարական ձեռք) միայն պղնձի մասը, իսկ քիմիական մասի շինարարությունը մինչև անգամ չեն էլ սկսել:



Պյատակովի այս ցուցմունքները լրացրեց Ուրալէկոնոմիկոս տրեստի նախկին ավագ ինժեներ-կոնստրուկտոր, վնասարար Պուչկովը: Նա ցուցմունք տվեց, վոր՝

«Պղնձի արդյունաբերության մեջ յեղած հակահեղափոխական կադ-  
մակերպության հակահեղափոխական դործունեությունը կատարվում էր  
հետևյալ ուղղությամբ՝  
առաջին, դիտավորյալ կերպով հանքարաններում ստորերկրյա  
հրդեհներ առաջ բերել:  
յերկրորդ, հանքի հանույթի աճումն արգելակել՝ կապիտալ շինա-  
բարույթումը դիտավորյալ կերպով ուղադնելու (միանգամայն բավա-  
րար հատկացումներ ունենալով հանդերձ) և նախադեմը կասեցնելու  
միջոցով:  
յերրորդ, ակնհայտ կերպով անպետք նախադեմեր կիրառել»:

Այնուհետև Պուչկովը թվարկեց վնասարարության կոնկրետ  
փաստերը.

«Բազմիցս հանքարանում յեղած Արխտովը և Բերմանը նույնպես  
դիտելին, վոր հին աշխատանքների տեղերում նկատվում է ջերմացում  
(ջերմաստիճանի բարձրացում), բայց այդ աշխատամասի սառեցման  
համար դիտավորյալ կերպով միջոցներ ձեռք չեյին առնում»:

Հետևանքն այն յեղավ, վոր ծծմբաքարի ինքնարոնկումից 1935 թ.  
հունիսի 25-ին հանքարանում ստորերկրյա խոշոր հրդեհ ծագեց:

Բերմանի կողմից դիտավորյալ կերպով վորևե կանխիչ միջոցներ  
(պատնեհներ, փականակներ) ձեռք չառնելը միանգամից այն հետևանքն  
ունեցավ, վոր ծծմբաքարի այրումից դադարն արագությամբ տարած-  
վեցին վո՛չ միայն «Կոմպանիայայ» հանքահորի բոլոր անցքերում,  
այլև «Ցենտրալնայա» և «Կոմինտերն» հանքահորերում, կանգնեցնելով  
հանք հանելու և նախապատրաստական աշխատանքները բոլոր հանքա-  
հորերում 1935 թվի հունիսի 25-ից մինչև սեպտեմբերի 26-ը:

Հրդեհն ավելի քան 1.500.000 ռուբլու վնաս պատճառեց պետու-  
թյանը. պակաս է հանձնվել պղնձի ձուլման դործարաններին 80.000 տոնն  
հանքանյութ:

Հանքահորերը շարքից դուրս հանելն այն աստիճան ծանր անդրա-  
դարձավ հանքային վարչության արտադրական-տնտեսական դրուծյան  
վրա, վոր նա ի վիճակի չեղավ հրդեհն իր միջոցներով լիկվիդացիայի  
յենթարկելու: Ծանր Արդյունաբերության Ժողկոմատը հրդեհը լիկվի-  
դացիայի յենթարկելու համար Կրասնոդարեյսկի հանքարանին հատ-  
կացրեց մեկ միլիոն ռուբլի:

Նույն դիվերսիոն նպատակներով և Արխտովի անմիջական ցուցում-  
ներով, Բերմանը և Գայդերովը վոչ միայն դիտավորյալ կերպով մի-  
ջոցներ ձեռք չառան հրդեհը կանխելու համար, այլև հակահրդեհային  
ձեռնարկումների պլանը նույնիսկ չկազմեցին:

Կրասնոդարեյսկի հանքարանում ստորերկրյա հրդեհը շարունակ-  
վում է մինչև այժմ:

Արդեն հրդեհը ծագելուց հետո Արխտովը դիտավորյալ կերպով տա-  
պալեց հրդեհի լիկվիդացիայի իրական ձեռնարկումները...

Ուզում եմ հայտարարել քննչական մարմնին, վոր հրդեհի տեսակե-  
սից սպառնալից դրուծյան մեջ են գտնվում նաև մի շարք այլ հանքա-  
րաններ՝ նույնպես Արխտովի դիտավորյալ դործողությունների հետևան-  
քով:

Յես նկատի ունեմ Ն.-Լեվինսկի հանքարանում և «III Ինտերնացիո-  
նալ» հանքարանում տեղի ունեցած ստորերկրյա հրդեհները:

Հրդեհի վտանգի տակ է գտնվում նաև Դեդոյարինսկի հանքարանը...  
Տաուբեն արհեստականորեն ու խարդախությամբ անցկացրեց Ու-  
խովսկի հանքահորի («III Ինտերնացիոնալ») հանքարան հանք բարձրաց-  
նող մեքենայի նախադեմը, վորը անպետք էր Կուչայկայի հանքահորի  
համար:

Ուխովսկի հանքահորի այդ տիպային նախադեմի վրա անհայտ անձ-  
նավորության ձեռով (յերբ յես դործուղման մեջ էյի Մոսկվայում) մա-  
կադրված էր՝ «Ընդունել Կուչայկայի համար»:

Այդ մակադրության հեղինակը յես չկարողացա վորոշել, բայց  
Տաուբեն ճանաչում է այդ անձնավորությանը, վորովհետև նախադեմը  
նա յե հաստատել:

Այն կապակցությամբ, վոր Կուչայկայի հանքահորի ցցահարի  
(копер) վոչ բավականաչափ բարձրությամբ նախադեմը լինելը վտան-  
գավոր է բանվորների կյանքի համար, յես ուզում եմ մատնանել այն  
հետևանքները, վոր ունեցավ Լիվիսինսկի հանքային վարչության № 2  
հանքահորի համար նույնպիսի ցցահարի նախադեմում:

1936 թ. ապրիլ ամսին այդ հանքահորում վանդակը պոկվեց-ընկավ  
հատկապես այն բանի հետևանքով, վոր վանդակը չափից ավելի յեթ  
բարձրացվել, մինչդեռ ցցահարը բավականաչափ բարձր չեր: Այդ տ-  
վարիայի ժամանակ սպանվեց յերկու բանվոր»:

Մի՞թե պարզ չե սրանից հետո, վոր պղնձի արդյունաբե-  
րության վերաբերմամբ, վորի արագ վերելքին մենք առանձնա-  
պես ձգտել ենք պաշտպանության կարիքների բավարարման չա-  
հերի տեսակետից, մենք թույլ ենք տվել նաև լուրջ զանցառու-  
թյուններ, չափազանց շատ ազատություն վերապահելով մեր  
թշնամիներին: Մի՞թե պարզ չե պղնձի արդյունաբերության ուրի-  
նակից, վոր յեթե մենք—ու ամենից առաջ Ծանր Արդյունաբե-  
րության Ժողկոմատը և Ուրալի կազմակերպությունները—ավելի  
ուշադիր լինեյինք այդտեղ տեղի ունեցող աղաղակող խայտա-  
ռակությունների վերաբերմամբ, մենք շատ ավելի շուտ յերեան-  
կերելեյինք վնասարարությունը և շատ ավելի շուտ հաշիվ կմա-  
րելեյինք Պյատակովի վոճրագործ չայկայի հետ: Այն ժամանակ  
մենք հաստատապես կկարողանայինք պղնձի հանույթն առաջ  
չարժել շատ ավելի արագ կերպով, քան այդ յեղել է:



Կամ վերջենք այնպիսի որինակ, ինչպես ռեպրեսի թրոյու- նաբերութեան մեջ կատարված վնասարարութիւնն է: Բավական եր, վոր մենք ժամանակին փոքր ինչ ավելի զգաստութիւն ցու- ցաբերեցինք Բիտկերի և Ընկ: Կասկածելի գործերի վերաբեր- մամբ, և մենք կանխած կլինեցինք այդ մութ կոմպանիայի կա- տարած մի շարք ուղղակի զայրացուցիչ վնասարարական ակտե- րը:

Անցյալ տարվա ամառը մեր բոլորիս աչքին ընկաւ ավտոմե- քենաների անլաճածկերի բոլորովին աննորմալ դրութեան փաստը: Տեղերում առանձնապէս ուժեղ եր այդ զգացվում: Այժմ մենք ունենք Բիտկերի ցուցմունքները, վորտեղ ասված է հե- տեյալը.

«Նմբի (Յարոսլավլի ռետին-ասրեստի կոմբինատում) քաղաքիչ աշ- խատանքի հետեանդով 1936 թ. մայիս—հունիս ամիսների ընթացքում պատրաստվել և մոտ 200.000 դեֆեկտավոր անվաղող (меша): Այդ կա- տարվել և այսպէս. խումբը մտցրել է իր սեփական ռեցեպտը և առանց 1000—2000 անվաղող ստուգելու, ինչպէս սովորաբար կատարվում է, այդ ռեցեպտով միանգամից սկսել են սերիայով արտադրութիւն, և զործարանը ավելի քան յերկու ամսվա ընթացքում (մայիսի 11-ից մինչև հուլիսի 21-ը) բաց է թողել ամբողջովին խտան արտադրանք: Միաժամանակ անտեսվել է ՀՊՐՈ-ի մշակած ԱՅ ռեցեպտը, վորը վործարկելիս դրական արդիւնքներ ե տվել և նախատեսում եր զործա- ծութեան մեջ դնել մեծ տոկոսով սինթետիկ կաուչուկ:

Անվաղողների վորակի աստարեզում կատարված այդ վնասարարա- կան աշխատանքը մի ժաման և վնասարարական այն դժի, վոր յես կիրա- ռում եյի կարեւորագույն տնտեսական խնդիրներից մեկին—սինթետիկ կաուչուկի յուրացման խնդրին լուծում տալու աստարեզում»:

Դժվար չե հասկանալ, վոր ավտոմեքենաների անլաճածկերի արտադրութիւնը վիժեցնելով, Բիտկերի վնասարարական շա- կան ձգտում եր հարված հասցնել կոլտնտեսութիւններին և խորհ- տնտեսութիւնների բերքահամալքի կամպանիային, իսկ դրա հետ միասին նաև մեր մի շարք ուրիշ կարեւորագույն ձեռնարկում- ներին:

Վնասարարների մինչև իսկ այս հատուկտոր ցուցմունքներից յերեւում է, թե վորքան բազմազան են մեր թշնամիների վնասա- րարական—դիվերսիոն աշխատանքի յեղանակները և մեր տնտե- սական որդանների ղեկավարութեան մեջ վորքան շատ անցքեր կան, վորոնց միջով սողոսկում են մեր թշնամիները, հարված- ներ հասցնելով մեզ: Գաղթենիական անհոգութեամբ և քաղաքական

կարճատեսութեամբ միայն կարելի յե բացատրել այն, վոր շատ տնտեսական ղեկավարներ ուր—ավուր անցել են և անցնում են ա- ղաղակող վնասարարական գործերի կողմով: Վնասարարների ցուցմունքներից բերված փոքրաթիւ քաղվածքներում անգամ կա- րելի յե գտնել ուսանելի շատ որինակներ, վորոնցով մենք պետք է սովորենք հայտաբերել և կանխել վնասարարական—դիվերսիոն ակտերը:

Վնասարարները չեյին կարող ստախանովյան շարժման վո- խերիմ թշնամիները չլինել: Յեվ նրանք իրոք զաղրելի պայքար եյին մղում ստախանովականների դեմ, ստախանովյան շարժման դեմ:

Իերեմ յերկու ցուցմունք այդ առթիւ:

Առաջինը—Դորենիսի ցուցմունքը: Ահա նրա խոսքերը.

«Ստախանովյան շարժումն իրեւ թե լայն կերպով ծավալելու ան- վան տակ մենք ղեկավարար վարկարեկում եյինք այդ շարժումը: Դրա համար անհրաժեշտ պայմաններ մենք չեյինք ստեղծում, ղեկավարար աշխատողը յերկարացնում հասցնում եյինք 10 ժամի, իսկ վոր- պեսի յերկարաւորութիւն սերմանքը ստախանովականների ու վոչ-ստա- խանովականների միջև, մենք Ազոտստրոյում մտցրինք առանձին բանվոր- ների որտին այնպիսի աշխատանքի համալրում, վորը նրանք փաստո- րեն չեյին կատարում: Այդ մեքենայութիւնները մենք կերպում եյինք սիստեմատիկ կերպով»:

Յերկրորդ ցուցմունքն այդ հարցի վերաբերմամբ—Նորկինի ցուցմունքն է.

«Ստախանովյան շարժմանը մենք վնաս եյինք հասցնում նաև այն բանով, վոր ստախանովականներին այնպիսի աշխատանք եյինք հանձնա- րարում, վորը հետադայում պետք է վերակատարվեր: Այդպիսով ստաց- վում եր այն, վոր բանվորները ջանում եյին, կառուցում եյին, իսկ յերբ աշխատանքն ավարտվում եր—«բանից դուրս եր դալիս», վոր այդ արվել և վոչ ըստ նախադժի, վոչ հարկ յեղած ձևով կամ վոչ համա- պատասխան տեղում և այդ պատճառով չինամը քանդում եյին ու նորից եյին կառուցում: Այդպէս յեղալ, որինակ, որեւում զործարանի հիմ- քերը դնելու գործում, վորոնք շինարարութիւնը վերջնապէս հետո պայթեցվեցին, և ստախանովյան աշխատանքի արդիւնքներն իրուր ան- ցան»:

Յեւ այդ ամենը կատարվում եր վոչ միայն աղնիւ տնտեսա- վարներից և ինժեներներից վոմանց աչքի առաջ, այլև մեր կու- սակցական ու պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների աչքի ա-



առջ, վորոնք կամ չեյին հասկանում իրենց առաջ տեղի ունեցող փաստերը, կամ թե չեյին կարողանում պայքարել դրանց դեմ:

Վնասարարները ձգտում եյին վիժեցնել ստախանովյան շար-  
ժումը. նրանք ձգտում եյին դժգոհություն առաջ բերել բանվոր-  
ներէ մեջ: Այդ բանով շատ տեղերում զբաղվում եյին բոլոր այդ  
Պատակովները, պատակովականները և այլ սրիկա-վնասարար-  
ները:

Իր ցուցմունքի մեջ այս հարցի վերաբերյալ Պատակովն ա-  
սում եր.

«Շինարարական հրապարակում նախ ցուլինը, իսկ այնուհետև Ժարի-  
կովը բանվորների սոցիալ-կենցաղային սպասարկման վիժեցումներ  
եյին ստեղծում, ծանր կենցաղային պայմաններ եյին ստեղծում, ձգձը-  
ղում եյին աշխատավարձի վճարումը:

Այդ է վերջո դժգոհություններ եր առաջ բերում բանվորների մեջ և  
նպաստում եր ստախանովյան շարժման վիժեցմանը»:

Բերեմ դարձյալ մի որինակ այն մասին, թե վնասարարական  
բանդայի բոլոր այդ հրեշները վորպիսի կատաղի ատելություն  
եյին տածում խորհրդային իշխանության և բանվորների նկատ-  
մամբ: Ահա Ռոստոսեւմաչի նախկին տեխնիկական դիրեկտոր  
Ռավվայի ցուցմունքները.

«1936 թվականի մայիսյան տոնին կազմակերպությունը պողպատա-  
ձուլական ցեխում նախապատրաստեց և դուրս բերեց բանվորների թու-  
նավորումը դադով, վորի հետևանքով թունավորվեցին այդ մոմենտին  
ցեխում գտնվող բանվորները, ինչպես և նրանց փրկելու համար ողնու-  
թյան շտապած հրեհհաշնջները՝ թվով 17 հոգի, վորոնցից 6 հոգի մա-  
հացան:

Թունավորումը կազմակերպվել եր Գլեբով-Ավիլովի առաջադրանքով:  
Այդ դեպքերսին ակտի անմիջական կատարողներն եյին՝ գաղակայանի պե-  
տի տեղակալ Շլիկովը և պողպատաձուլական ցեխի մեխանիկ Կոզլովը,  
ըստվորում վերջինս այդ գործի մեջ եր ներգրավվել մեկ թե յերկու  
մարդ...»

Մայիսի 1-ի նախորդակին Գլեբով-Ավիլովին ինձ կանչեց իր կարեն-  
տը և ասաց, վոր յես պետք ե ոգտվեմ այն հանգամանքից, վոր մայի-  
սյան տոներին դործարանում վերանորոգում ե կատարվելու, և կազմա-  
կերպեմ բանվորների թունավորումը դադով: Նա հայտարարեց ինձ, վոր  
մայիսի 3-ին, վերանորոգումը վերջանալուց հետո, նկատի ունեն դա-  
դախցանը միացնելու. «Բավական ե միայն ցեխերից մեկում գաղաժուղ-  
ների սողնակները բաց թողնել, և դադը կդնա ցեխը»: Նա ինձ նախա-  
զգուշացրեց, վոր թունավորումը տեղի ունենալուց հետո հարկավոր կլինի  
այդ բացատրել վերանորոգումը կատարող բրիգադի անփորձությամբ»:

Եւ դրանից դենը ո՛ւր դնալ: Իսկ չե՞ վոր մեր կարճատեսու-

թյան պատճառով մինչև իսկ կուսակցության մեջ սողոսկած Ռավ-  
վայի ցուցմունքներն ընդամենը միայն լրացումն են այն բանի, ինչ  
քոլորին հայտնի յե հունվարյան դատավարությունից հետո նաև  
ուրիշ բազմաթիվ նման փաստերի վերաբերմամբ:

Բոլոր վերևում ասածները վերաբերում են ծանր արդյու-  
նաբերությանը: Այդ չի նշանակում, թե վնասարարական-դիվեր-  
սիոն ակտեր չկան արդյունաբերության մյուս ճյուղերում:  
Դրանք կան նաև թեթև արդյունաբերության մեջ:

Որինակ, չի կարելի մոռանալ այն մասին, վոր «Արդյունա-  
բերական կուսակցության» հայտնի գործի կապակցությամբ  
թեթև արդյունաբերության մեջ խոշոր վնասարարական կազմա-  
կերպություններ մերկացվեցին:

Իր ժամանակ, մի քանի տարի սրանից առաջ, մսի և պահա-  
ծոյի արդյունաբերության մեջ մերկացվեց խոշոր վնասարարա-  
կան մի կազմակերպություն: Պետք ե վոր սննդի արդյունաբե-  
րության աշխատողները լրջորեն հաշվի առնեյին այդ: Ձի կա-  
թելի նվազեցնել դիվերսիոն-վնասարարական աշխատանքի վտան-  
դը սննդի արդյունաբերության մեջ:

Ինչ խոսք, վոր անտառարդյունաբերության մեջ, վորտեղ  
հարկավոր ե նկատի ունենալ ղեկավար կադրերի քաղաքական  
մեծ հետամնացությունը, կան չափազանց անբարենպաստ ճակա-  
տամասեր: Ժամանակն ե, վոր Անտառօդկոմատում աշխատող  
ընկերները հաշվի առնեն վնասարարության վերջին դասերը,  
հաշվի առնեն ճապոն-գերման-տրոցկիստական գործակալների  
մերկացված վնասարարական-լրտեսական գործունեյության  
փաստերը:

Այս ամենը վերաբերում ե արդյունաբերության նաև մյուս  
ճյուղերին: Թվում ե, թե մենք բավականաչափ դասեր ստացել  
ենք, հասկանալու համար, վոր տնտեսության բոլոր ճյուղերում,  
քոլոր պետկազմակերպություններում վնասարարները և դիվեր-  
սանտներն աշխատում են իրենց համար հարմար տեղ գտնել,  
ողտվել մեղանում բազմացած ինքնադոհ ղեկավարների անհոգու-  
թյունից, վորպեսզի իրենց կեղտոտ գործը կատարեն:

Ծանր Արդյունաբերության Ժողկոմատում նստել եր Ժողկո-  
մի տեղակալ Պատակովը, վորը վնասարար-դիվերսանտ դուրս  
յեկալ: Բայց, ինչպես հայտնի յե, Հաղորդակցության Ճանա-  
պարհների Ժողկոմատում ել վնասարար Լիվչիցը Ժողկոմի  
տեղակալի պաշտոնում եր: Անտառօդկոմատում վնասարար



Սովորելով չնայել ժողովի տեղակալ եր, իսկ մինչև այդ սույն լրտեսը յեղել է, ինչպես հայտնի յե, արտաքին դործերի ժողովի տեղակալ: Պետական բանկում վնասարար Արկուսը Պետքանկի կառավարչի տեղակալն եր: Արդյունաբերական բանկի կառավարչն եր Թումանովը: Հողօրդկումատում վերջին ժամանակներս մերկացվել են մի քանի խոշոր վնասարարներ այն անձերի շարքից, վորոնք նստած էին ժողովատի ամենապատասխանատու պոստերում: Այդպիսիներն էին՝ Մարկելիչը, Կոնորը, Վոլֆը, Ռեյնգոլդը—սրանք բոլորը հողագործության ժողովի նախկին տեղակալներն են: Վնասարար դուրս յեկավ Յուզորտրանի նախկին պետ Սերբերյակովը: Զրային կոմիսարիատում մի ժամանակ ժողովի տեղակալ եր վնասարար Զոֆը: Զե՞ վոր այս ամեննին ել լրիվ թվարկումը չե համապատասխան փաստերի, սակայն ասածն ել, կարծեմ, բավական է հարցի լրջությունը հասկանալու համար:

Հարկավոր է կանգ առնել նաև բնակչության պարենավորման բնագավառում կատարված վնասարարության որինակի վրա: Այդ խմաստով մեծ ուշադրության արժանի յեն Պերմի Մեթոայսիչչետորդի նախկին գիրեկտոր՝ վնասարար Յազովսկի-խի ցուցմունքները: Նա ցուցմունք է տալիս.

«Այն բանից հետո, յերբ 1936 թվի հուլիսին հրապարակվեց ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագիծը, Գինգրուրդը (Սվերդլովսկի Որլնուտորդի պարենային ապրանքների բաժանմունքի պետը) հակահեղափոխական խմբի մասնակիցների առջև խնդիր դրեց՝ դիտավորյալ կերպով վարկաբեկելու Սահմանադրության մեջ հանրագումարի բերված նվաճումները: 1936 թվի սեպտեմբեր ամսին ինձ հետ խոսելիս նա ասաց, վոր մեղ անհրաժեշտ է Խորհուրդների VIII Արտակարգ Համագումարի մոմենտին, վորը պետք է հաստատի Սահմանադրությունը, բնակչության մասսայական դժգոհություն կազմակերպել: Գինգրուրդն այնուհետև ասաց, վոր այդ ամենից լավ կարելի յե անել հացի խանութների առաջ հերթեր ստեղծելով, ընդհատումներ կազմակերպելով հացի մատակարարման դործում: Հիմնական ուշադրությունը, ինչպես ասում եր Գինգրուրդը, հարկավոր է կենտրոնացնել Սվերդլովսկի մարզի հիմնական արդյունաբերական կետերում հացի առևտուրը կազմավորվելու վրա. ընդամենն նա առանձնապես ընդգծում եր, վոր անհրաժեշտ է հացի առևտուրը կազմավորվել հատկապես Սվերդլովսկում, Պերմում և Տագելում:

Մատնանշված վնասարարությունը մեր հակահեղափոխական խմբերն իրականացրին»:

Սվերդլովսկի մի այլ վնասարար, նախկին կոմունիստ Վորոնպայեյը հետևյալ ցուցմունքն է տալիս.

«Սվերդլովսկում 1936 թվի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 5-ը, այսինքն ԽՍՀՄ-ի Խորհուրդների VIII Արտակարգ Համագումարի աշխատանքի ժամանակաշրջանում տեղի ունեցած ընդհատումները ստեղծվել էին դիտավորյալ կերպով՝ Գորվնուտորդի և Սվերդլովչետորդի աշխատողների վնասարարական-կազմավորված աշխատանքի հետևանքով»:

Ինչպես հետաքննությունը հաստատել է, Սվերդլովսկում 1936 թվի նոյեմբերի 25-ին և հաջորդ օրերը, յերբ կային հացի բավականաչափ պաշարներ, վնասարարական խմբին հաջողվել է դիտավորյալ կերպով ընդհատումներ կազմակերպել հացի մատակարարման դործում և հսկայական հերթեր գոյացնել խանութների առաջ: Դրան հասել էին այն բանով, վոր խանութների զգալի մասին հացը անհրաժեշտ քանակից պակաս էին մատակարարել, խանութների մի մասը ծանրաբեռնվել եր հացով, իսկ 87 խանութներից 17-ը այդ օրերին բոլորովին հաց չէին փոխադրել: Հասկա մի՞թե սա խայտառակություն չե խորհրդային և կուսակցական այն դեկավարների համար, վորոնք աչքի առաջ անպատիժ կերպով կատարվել են այդ զգվելի վնասարարական ակտերը:

Կհիչեցնեմ դարձյալ փաստեր, վորոնք վերաբերում են մարգային դեկավար խորհրդային օրգանների դործունեյությանը:

Վերջերս վորպես վնասարար և տրոցկիստ մերկացվեց Սվերդլովսկի մարգային դործկոմի նախագահ Գոլովինը. Կիե-վում վորպես վնասարարներ մերկացվեցին մարգային դործկոմի նախագահ յերկու տեղակալները և այլն:

Այնուհետև կանգ կառնեմ վերջին ժամանակվա վնասարարության առանձնահատկությունների վրա: Դրա համար հարկավոր է վերջին ժամանակվա վնասարարական-դիվերսիոն աշխատանքը համեմատել Շախտիի դատավարության ժամանակաշրջանի վնասարարության հետ:

Այն ժամանակ, 1928—1930 թվականներին, յերբ բացվեց Շախտիի գործը, «Արդյունաբերական կուսակցության» գործը, Մետրո-Վիկիերսի գործը, վնասարարությունները անդի արդյունաբերության մեջ, Փոն Մեկիի վնասարարական-դիվերսիոն կազմակերպությունը յերկաթուղային տրանսպորտում, մեք առջև կանգնել էին բուրժուական բանակից, բուրժուական մտնադետներ միջից յելած վնասարարները: Այն ժամանակ մենք գործ ունեյինք բուրժուազիայի միջից յելած վնասարարների հետ: Այդ պարոնները կապված էին արդատահամանի ուսուսական



սպիտակ-գլարդիականներին հետ, ոտարերկրյա հետախուզիչներին և լրտեսների հետ, բայց նրանք մեզ բարեկամ չեյին ե՛լ ձևանում, ել չեմ խոսում այն մասին, վոր նրանք հեռու եյին մեր կուսակցութիւնից:

Այժմ մերկացված վնասարարութեան առանձնահատկութիւնն այն է, վոր դիվերսիոն-վնասարարական կազմակերպութիւններում այժմ ակտիվ դեր եյին խաղում կուսակցական տոմս ունեցող մարդիկ, մեր կուսակցութեան միջից յեկածները: Այժմյան դիվերսիոն-վնասարարական կազմակերպութիւնների հատուկ վտանգն այն է, վոր այդ վնասարարները, դիվերսանտները և լրտեսներն իրենց ձևացնում են կոմունիստներ, խորհրդային իշխանութեան ջերմ կողմնակիցներ և նույնիսկ յերբեմն անցյալում այս կամ այն ծառայութիւնն են մատուցել կուսակցութեանը և խորհրդային պետութեանը: Այս ամենը նրանց համար հեշտացնում է մեր որդաններին խաբելը, մեր ղեկավարներին, վորոնք տառապում են անհողութեամբ և քաղաքական կարճատեսութեամբ: Մինչդեռ այժմ հաստատված է, վոր տրոցկիստները վոչ միայն միակցվել են բուրժուական վնասարարների հետ ու ֆաշիստական և այլ ոտարերկրյա պետութիւնների հետախուզական բաժինների գործակալների հետ, այլև դարձել են վնասարարութեան, դիվերսիաների ու լրտեսութեան անմիջական կազմակերպիչները և ղեկավարները: Դիմակալութիւնը և ձևանալով վորպէս կոմունիստներ, մեր բարեկամների տեսք ընդունելով, նրանք սողոսկում եյին դեպի աչքի ընկնող պաշտոնները խորհրդային պետութեան մեջ և կուսակցական կազմակերպութիւններում, վորպէսզի իրենց համար դուրսացնեն հանցավոր-քայքայիչ աշխատանքը: Տրոցկիստները դարձել են վնասարարների և մարդասպանների բանդա, վորոնք ծառայութեան են մտել ոտարերկրյա պետութիւնների մոտ և վորոնք կատարում են ֆաշիստական հետախուզութիւնների հանձնարարութիւնները մեր յերկրում:

Բանն այդպէս է փոխվել Շախտիի դատավարութեան ժամանակից հետո: Այդպէս տրոցկիստներն այլասերվեցին, դարձան վոճրադործ բանդա, վորը խտրութիւն չի դնում խորհրդային իշխանութեան դեմ ուղղված պայքարի միջոցների մեջ, վորը խտրութիւն չի դնում մեր յերկրի բանլոր դասակարգի դեմ ուղղված պայքարի միջոցների մեջ:

Պետք է ասել, վոր վոչ միայն տրոցկիստները, այլև աչքերը դնացին այդ ուղիով: Բոլոր այդ բուխարինականները, ռիկուկականները և նրանց նմաններն այժմ նույնպէս մերկացված են տրոցկիստներին-վնասարարներին, դիվերսանտների և լրտեսների հետ միասին՝ իրրև մի կոմպանիա:

Այս կապակցութեամբ կրեւեմ աչքերից մեկի՝ բալականաչափ աչքի ընկնող մի աշխատողի ցուցմունքները: Յես նկատի ունեմ վ. Ա. Յակովլևիին, վորն Ուզլանովի որով Մոսկվայում իմամովնիկի ռայկոմի քարտուղար եր: Իր ցուցմունքներում Ձեւաբինսկի երկտրո-մետալուրգիական կոմբինատի նախկին պետ՝ վնասարար վ. Ա. Յակովլևին ասել է.

«Ինժեներ Կիրադինի հետ միասին յես կիրառել եմ հետեւյալ վնասարարական ձեռնարկումները.

1) Շինարարութեան մեջ կառուցվում եր մեծ մեխանիկական ցեխի տանիքը, և մենք կառուցեցինք այդ տանիքն ըստ Գիպրոսպեցմետի նախագծի՝ այնպիսի ձևով, վոր բոլոր տեղումները (ձյուն, անձրև) մնում եյին նրա վրա: Դեռ ավելին. համարյա անհնարին եր այդ տանիքի ձյունը մաքրել: Յես հասկանում եյի, վոր տանիքի կոնստրուկցիան վնասարարական եր, յես պետք է դադարեցնեյի շինարարութիւնը—յես այդ չարի: Հետևանքն այն յեղավ, վոր տանիքն արագութեամբ մաշվեց և կաթնում եր, ինչպէս մաղը ու դրա հետևանքով փչանում եր մեծ մեխանիկական ցեխի թանգարտեք սարքավորումը:

Այդ վնասարարական ակտն այնչափ ակներև եր, վոր չեր կարելի այդ փաստի մասին չդրել Գլխավոր վարչութեանը, վորը և յես արե, վորպէսզի քողարկեմ իմ դերն այդ ձեռնարկման մեջ: Տանիքը կառուցվեց 1932 թվականին ինժեներ Պոդոսեկի անմիջական ղեկավարութեամբ, վորը կատարում եր շինարարութեան տեմպերն արդեւակելու վերաբերյալ իմ ցուցմունքները:

2) Ըստ Գիպրոսպեցմետի նախագծի՝ մեծ կոմունների յերեք հազար տոննանոց մամուլը դետեղված եր այնպիսի ձևով, վոր ցեխերը յերեք կողմից փակել եյին նրա արտադրական հասանքը, իսկ չորրորդ կողմից նրա մուտքը նույնպէս փակված եր: Այդ մամուլի կառուցումն սկսել եր Կիրադինին իմ անմիջական ղեկավարութեամբ: Այս դեպքում ել յես աղմուկ բարձրացրի՝ խորհրդակցութիւններ գումարելով և ամեն տեսակ դրութիւններ ուղարկելով, դրա հետ միաժամանակ շարունակում եյի շինարարական աշխատանքները՝ մամուլը տեղակայելու համար: Հետևանքն այն յեղավ, վոր դործարանի կարողութիւնը նվազեց, վորովհետեւ այդ ամենահզոր մամուլներից մեկն է, և անհամաչափութիւն ստեղծվեց, վորովհետեւ փոխադարձ կապը ցեխերի միջև խախտվեց:

3) Ինժեներ Կիրադինի ղեկավարութեամբ մշակվեց 10 հազար տոննա տարողութիւն ունեցող նավթի պահեստի ամբարտակի նախագիծ: Բուն ամբարտակի ու բետոն տոննելի միջև կցվածքը վնասարարութեւն եր հաշվված, և դրա հետևանքով 1932 թվի նոյեմբերին նավթի պահեստը նավթ



լցնելիս՝ վերջինս ծծվեց կցվածքների մեջ, ճեղքեց ամբարտակը, և 5 հազար տոնն նավթը թափվեց Վոլգան»:

### Նույն Յակովլևի վրա այնուհետև տվեց հետևյալ ցուցմունքը.

«Այն մոմենտին, յերբ յես կոմբինատի շինարարություն յեկա (1934 թ.), ավանները և կոմբինատի կոյուղու գործիչները զբաղվում էին հետևյալն էր. հիմնական բանվորական ավանում զբաղված էին խողովակները, նաև անց էլին կացված պողպատե խողովակները Միաս դետի հուսով (այսպես կոչված դոլկեր), վորակաղի բոլոր աղբալները դուրս բերվան գետնի մյուս կողմը՝ վոռոզվող դաշար: Մնում էր խողովակներն անցկացնել մոտավորապես 200 մետր դրանիս գետնի միջով, միացնել ավանի կոյուղին դոլկերի հետ և շարունակել դրանք մինչև վոռոզման դաշտերը: Մինչև այս բոլոր աշխատանքների կատարումը ավանի, հիվանդանոցի, կինոյի, բազնիքի բոլոր աղբալները թափվում էին և ներկայումս էլ թափվում են Միաս գետը: Մոտավորապես այդպես էր զբաղվում նաև արտադրական ձեռնարկությունների կոյուղու կառուցման ասպարեկում: Բոլոր խողովակները զբաղված ու անց էլին կացված էլեկտրոդի գործարանի մյուս կողմը, հարկավոր էր դրանք հասցնել մինչև գետը, գետեղել դոլկերը և դուրս բերել Միաս գետի մյուս կողմը: Վորովհետև այդ չէր արվել, ես կոյուղին ֆերրոսպահան գործարանի մյուս կողմում ջանքով էր աշխատանքի վատ վորակի հետևանքով, բոլոր աղբալները գետնի յերեսն էին դուրս գալիս և առավ, աղյուսա-գործարանի ավանի շուրջը սլոտայտ գործելով, թափվում էին Միաս գետը:

Այդպիսով բոլոր աղբալներն ավանից և ձեռնարկություններից հուսով-լցվում էին գետը, վորտեղից ջուր էլին վերցնում գործարանների կարիքների և կոմբինատի ու էլեկտրակայանի ավանների բանվորների համար: Ինքնին հասկանալի չէ, վոր այդ ջրերը կեղտոտում էին գետը և առաջ էլին բերում համաճարակներ, վորի մասին յես հետո ցուցմունք կտամ:

Կոյուղու մնացած բոլոր աշխատանքների արժեքը կազմում էր 80, մտքածում 100 հազար ռուբլի: Ինքնին հասկանալի չէ, վոր այդպիսի գումար հեշտությունը կարելի չէր ճարել և ամբողջ աշխատանքն ավարտել մի սեպտեմբեր, քանի վոր կոմբինատի ընդհանուր արժեքը կազմում էր 100 միլիոն ռուբլի:

Յես այդ աշխատանքը չկատարեցի միանգամայն դիտակցաբար, վորովհետև դրա հետևանքն այն էլիներ, վոր ջրմուղը կառուցվելու հետ մեկտեղ բոլորովին կվերացվեյին համաճարակները և լուծում կստանար խմելու ջրի հարցը:

Իմ ցուցմունքի մեջ յես պետք է ասեմ, վոր այդ հարցերը մի քանի տարի շարունակ ավանների բոլոր հասարակական կազմակերպությունների և բանվոր բնակչության ուշադրության կենտրոնն էին կազմում, և մեծ դժգոհություն էր առաջ բերում այն հանգամանքը, վոր բացակայում էր հողատնտեսությանը բանվորների կարիքների ու առողջության մասին: Իհարկէ, այդ դժգոհությունն ուղղված էր վոչ թե իմ կոնկրետ հանցավորիս դեմ, այլ պետության դեմ, վորը «չի հոգում» աշխատա-

վորների առողջության մասին: Ինչպես յես առաջ արդեն ցուցմունք եմ տվել, կուսակցության և յերկրի ղեկավարության դեմ բնակչության մեջ դժգոհություն հարուցելն անբերի՝ վնասարարության վերաբերյալ դիրեկտիվի բաղկացուցիչ մասն էր կազմում: Կոյուղու կառուցման բնագավառում կատարած իմ վնասարարական աշխատանքն այդ դիրեկտիվի իրականացման կոնկրետ փաստերից մեկն է»:

### Թե այդ վնասարարությունն ինչի յեր հանդում, յերևում է հենց Յակովլևի ցուցմունքներից.

«Յես արդեն ցուցմունք եմ տվել, վոր, առաջին՝ բնակչությանը ստիպված էր ողջվելու տեխնիկական ջրից, վորն առանց մաքրվելու կզար Միաս գետից, և վոր, յերկրորդ՝ բոլոր աղբալները կցվեյին նույն գետը, ըստիորում աղբալները կթափվեյին Միաս գետի հոսանքի այն մասը, վորն ավելի վեր էր, քան ջրհան կայանը, վորը ջուր էր վերցնում բանվորների կենցաղային կարիքների համար: Դրա հետևանքով էլ, բացի բանվորների մեջ մշտապես դժգոհություն ծագելուց, առաջ էլին դալիս մի շարք համաճարակներ: Համաճարակներ առաջ էլին դալիս հատկապես գործարանի և պետական չրջանային էլեկտրակայանի ավաններում, վորոնց բնակչությունն ողջվում էր տեխնիկական ջրից: 1935 թվի ամսուր և 1936 թվի մայիսին առաջ յեկան դիզենտերիայի և 1935 թվի դեկտեմբերին՝ վորովայնային տիֆի համաճարակներ, ըստ վորում միջին հաշվով որական հիվանդանում էին 8 հոգի, յերբեմն էլ հիվանդացողների թիվը հասնում էր 18-ի և 1936 թվի փետրվարի համաճարակի ժամանակ հիվանդանում էին որական 5—7 հոգի: Բացի դրանից, մշտական յերևույթ էլին մասսայական ստամոքսային հիվանդությունները, վորի հետևանքով նվազում էր աշխատանքի դուրս յեկողների թիվը և ընկնում էր աշխատանքի արտադրողականությունը»:

Սրանք են փաստերը: Սրանցից յերևում է, վոր մենք այստեղ ևս գործ ունենք աշխատավորների վոխերիմ թշնամիների հետ, հանցադործների բանդայի հետ:

Մենք մատնացույց ենք անում բոլոր այս փաստերը՝ դրանցից բուլլետիկյան հետևություններ անելու համար: Մեր խնդիրն այն չէ միայն, վոր դտնենք առանձին հանցադործությունների մեղավորներին և պատժենք նրանց: Մեր խնդիրն է—դրանից գործնական և քաղաքական ճիշտ հետևություններ անել: Մեր ամենաառաջին խնդիրն այն է, վոր հասկանալի այդ փաստերը և վնասարարության ու վնասարարների դեմ պայքարը ծավալենք իսկապես բուլլետիկորեն:

Համկ(Բ)ԿԿ-ի 1928 թ. ապրիլի պլենումում Շախտիի գործի առթիվ հանդես գալով, ընկեր Ստալինն ուշադրությունը սրեց մեր աշխատանքի այն թերությունների քննադատության



վրա, վոր հայտաբերվեցին վնասարարութեան կապակցութեամբ: Նա այն ժամանակ ասում էր, վոր անհրաժեշտ է «վո՛չ թե մա-  
րել ինքնաքննադատութիւնը, այլ բորբոքել այն»:

Ընկեր Ստալինի այս ցուցումն ամբողջովին վերաբերում  
է նաև ներկա մոմենտին: Մենք պետք է ապացուցենք, վոր ըն-  
դունակ ենք բոլջևիկյան ինքնաքննադատութիւնը զարգացնելու,  
ապացուցենք, վոր ընդունակ ենք հաշվի նստելու քննադատու-  
թեան հետ, վորքան ել յերբեմն այդ անախորժ լինի ղեկավար-  
ներէ համար: Միայն այդպէս կարելի յէ իրոք ապացուցել, վոր  
մենք ունենք մեր թերութիւնները վերացնելու իսկական ցան-  
կութիւն, վորն առանց ինքնաքննադատութեան զարգացման վոչ  
մի արժեք չունի: Մեր խնդիրն է, նախ և առաջ, հասկանալ,  
թե կառավարման վո՛ր թերութիւնները, մեր աշխատանքի վո՛ր  
թերութիւնները հեշտացրին տրոցկիստների և այլ վնասարարների  
դավաճանական աշխատանքը, հեշտացրին ոտարերկրյա հակահե-  
տախտուղութիւնների այդ և մյուս գործակալների դավերը մեր  
տնտեսական օրգաններում, ձեռնարկութիւններում, հանքահո-  
րերում, յերկաթուղիներում, էլեկտրականացմանում, մեր պետա-  
կան հիմնարկներում:

Կառավարման գործում յերևան բերված խոչորադույն թե-  
րութիւնների առնչութեամբ մենք պետք է այժմ ուշադրութիւն  
նը կենտրոնացնենք հետևյալ հիմնական խնդիրների վրա. առա-  
ջին՝ կադրերի դաստիարակութիւն, յերկրորդ՝ աշխատողների  
ընտրութիւն և, յերրորդ՝ ղեկավարման մեթոդներ:

Յեթե մենք ուշադիր վերաբերվենք վնասարարութեան դա-  
սերին, մեր թշնամիների պայքարի նոր ձևերին, ապա մենք շատ  
բան կսովորենք և շուտ կազատվենք ղեկավար օրգանների աշխա-  
տանքի միջանի աղադակող թերութիւններից: Այդ իմաստով  
ուսանելի քիչ բան չեն պարունակում տրոցկիստական-բուխարի-  
նական և ոտարերկրյա գործակալների վնասարարական-դիվեր-  
սիոն աշխատանքի միջև իսկ այն փոքրաթիւ օրինակները, վոր  
վերևում բերինք: Միայն թե իրոք լինի սովորելու այդ ցան-  
կութիւնը, լինի իսկական ցանկութիւն ազատվելու վորոշ ինք-  
նադոճութիւնից, վոր առաջ է յեկել մեր միջանի ղեկավարների  
մեջ մեծ հաջողութիւնների հողի վրա:

## II

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ  
ԱՅԼ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԻ, ԴԻՎԵՐՍԱՆՏՆԵՐԻ ՈՒ  
ԼՐՏԵՍՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

### 1. ԿԱԴՐԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սկսեմ առաջին հարցից՝ կադրերի դաստիարակութեան  
հարցից:

Իր ժամանակին մենք կարողացանք անհրաժեշտ հետևու-  
թիւններ անել Շախտիի գործից: Շախտիի գործը ցույց տվեց,  
վոր մենք շատ մեծ կախում ունեյինք խորհրդային կադրերին  
խորթ՝ հին, բուրժուական մասնագետներից: Այդ գործը ցույց  
տվեց, թե մենք վորքան թույլ էյինք տեխնիկային ու արտադրու-  
թեանը տիրապետած բոլջևիկյան կադրերով ապահովված լինելու  
տեսակետից: Մենք Շախտիի վնասարարութեան դասերն աշա-  
գործեցինք, վորպեսզի նոր ուսերի վրա դնենք տնտեսական-  
տեխնիկական կադրերի դաստիարակութեան հարցը:

1928 թվականից, յերբ բացվեց Շախտիի վնասարարների  
գործը, մենք սկսեցինք վերակառուցել ամբողջ տեխնիկական  
կրթութիւնը: Այն ժամանակ կուսակցութիւնն ուղղակի ասաց,  
թե այլևս չի կարելի հաշտվել մեր տնտեսական կադրերի տեխ-  
նիկական հետամնացութեան հետ: Բոլջևիկյան տեխնիկական  
կադրեր ստեղծելու խնդիրը, տեխնիկային տիրապետելու խնդիրը  
բոլջևիկների առջև դրվեց վորպէս ամենագլխավոր ու անհետա-  
ձգելի խնդիրներից մեկը:

Ընկեր Ստալինը 1931 թվականի սկզբներին՝ տնտեսավար-  
ների խորհրդակցութեանն ասաց.



«Համոթ մեղ պետք է խոստովանենք, վոր մեր՝ բուլլեիկներն մեջ  
ևս քիչ չեն այնպիսիները, վորոնք ղեկավարում են թղթեր ստորագրե-  
լով: Բայց վոր դործի մեջ թափանցեն, տիրանան տեխնիկային, դառնան  
գործի տերը—այդ՝ յերբեք:

Ի՞նչպես կարող եր պատահել, վոր մենք՝ բուլլեիկներս, վոր յերեք  
հեղափոխություն ենք կատարել, հաղթանակով ենք դուրս յեկել քա-  
ղաքացիական դաժան պատերազմից, լուծել ենք արդյունաբերություն  
ստեղծելու խոշորագույն խնդիրը, դյուղացիությունը շրջել ենք գետի  
սողիալից մի ուղին—ի՞նչպես կարող եր պատահել, վոր մենք արտադրու-  
թյան ղեկավարման գործում տեղի յենք տալիս թղթին:

Այստեղ պատճառն այն է, վոր թուղթ ստորագրելն ավելի հեշտ է,  
քան արտադրություն ղեկավարելը: Յեւ ասա շատ տնտեսավարներ  
ընթացան այդ նվազագույն դիմադրության գծով»:

Այնուհետև ընկեր Ստալինը խոսելով Շախտիի գործի մա-  
սին, այդ գործը դիտում եր վորպես տեխնիկական տեսակետից  
մեր տնտեսավարների անթույլատրելի հետամնացության վերա-  
բերյալ առաջին կարեւոր ազդանշան:

«Կյանքն ինքը մեղ բանիցս ազդանշան է ավել այդ գործում յեղած  
անարհեստագործական մասին: Շախտիի գործն առաջին ազդանշանն էր:  
Շախտիի գործը ցույց տվեց, վոր կուսակազմակերպություններում ու  
պրոֆիտություններում հեղափոխական ղեկավարությունը պակասել է:  
Այդ գործը ցույց տվեց, վոր մեր տնտեսավարները խայտառակ կերպով  
հետ են մնացել տեխնիկական տեսակետից, վոր վորոշ հին ինժեներ-  
ներ ու տեխնիկներ, աշխատելով առանց վերահսկողության՝ ավելի  
հեշտությամբ են գործում գետի վնասարարության ձանձուղի, մա-  
նավանդ վոր թշնամիներն արտասահմանից նրանց անընդհատ անհան-  
գրատացնում են «առաջարկներով»: Յերկրորդ ազդանշանն «Արդյունա-  
բերական կուսակցության» դատավարությունն է»:

Ընկեր Ստալինն այսպես եր բացատրում Շախտիի վնասարա-  
րության դասերը:

«Ի՞նչպես կարող եր պատահել, վոր վնասարարությունն այդպիսի  
լայն չափեր ընդուներ: Ո՞վ է մեղավոր դրա համար: Մենք ենք մեղա-  
վոր դրա համար: Յեթե մենք տնտեսության ղեկավարման գործը կազ-  
մակերպելինք այլ կերպ, յեթե մենք շատ ավելի շուտ անցնելիք գործի  
տեխնիկայի ուսումնասիրմանը, տեխնիկայի տիրապետմանը, յեթե մենք  
ավելի հաճախակի ու բանիմաց կերպով միջամտելինք տնտեսության  
ղեկավարմանը,—ապա վնասարարներին չեր հաջողվի այդքան շատ վնա-  
սել»:

Ընկեր Ստալինն այդ ճառում ձևակերպեց նաև վերակառույց-  
ման շրջանում մեր առջև ծառացած նոր խնդիրները:

«Ժամանակն է վերջ տալու արտադրությանը չմիջամտելու նեխած  
դրույթին: Ժամանակն է յուրացնելու մի այլ՝ նոր, ներկա շրջանին  
համապատասխանող դրույթ՝ միջամտել ամեն բանի: Յեթե դու գործա-  
րանի դիրեկտոր ես՝ միջամտիր բոլոր գործերին, թափանցիր ամեն բանի  
մեջ, աչքաթող մի անի վոչ մի բան, սովորիր և դարձյալ սովորիր:  
Բուլլեիկները պետք է տիրապետեն տեխնիկային: Ժամանակն է, վոր  
բուլլեիկներն իրենք մասնագետներ դառնան: Վերակառուցման շրջանում  
տեխնիկան վորոշում է ամեն ինչ»:

Տեխնիկային տիրապետելու լոզունգը դարձավ կուսակցու-  
թյան և բանվոր դասակարգի կենտրոնական խնդիրը, և այդ  
հսկայական դրական արդյունք տվեց: Շախտիի վնասարարները,  
առանց այդ ցանկանալու, արագացրին կարմիր մասնագետների  
կադրերի ստեղծումը, արագացրին մեր տեխնիկական կրթության  
վերակառուցումը:

Բերեմ ծանր արդյունաբերության վերաբերյալ միջանի  
թվեր: Համեմատենք Ծանր Արդյունաբերության Ժողովոմատի  
ձեռնարկությունների դրույթյունը 1930 և 1936 թվականներին:

1930 թվականին Ծանր Արդյունաբերության Ժողովոմատի  
ձեռնարկություններում աշխատող 1-000 բանվորին ընկնում եր  
20 ինժեներ, իսկ 1936 թվականին՝ արդեն 33 ինժեներ: Յեթե  
վերցնենք ինժեներներին, տեխնիկներին ու վարպետներին միա-  
սին, կտեսնենք, վոր այստեղ աճումը կազմում է 68-ի դիմաց  
105՝ յուրաքանչյուր 1000 բանվորին: Քարածխի արդյունաբերու-  
թյան մեջ նույն ժամանակամիջոցում ինժեներների թիվը ար-  
տադրության մեջ զբաղված 1000 բանվորին 4-ից հասել է 9-ի,  
իսկ քիմիական արդյունաբերության մեջ 33-ից 52-ի:

Վոր արդյունաբերության նոր տեխնիկական կադրերի ա-  
ճումն զգալի չափով տեղի յեր ունենում է հաշիվ կոմունիստե-  
րի, այդ յերևում է հետևյալ վիստերից.

Յերեք տարվա ընթացքում՝ 1933-ից մինչև 1936 թվականը՝  
կոմունիստների թիվը 9-ից հասավ 24 տոկոսի համապատասխան  
հաշվառում ունեցող հանքահորերի գլխավոր ինժեներներին ընդ-  
հանուր թվում: Նույն ժամանակամիջոցում քիմիական արդյու-  
նաբերության մեջ ձեռնարկությունների գլխավոր ինժեներների  
կազմում կոմունիստների թիվը 20-ից հասել է 28 տոկոսի:

1928 թվականին արդյունաբերական բուհերը տալիս էին  
ընդամենը մոտ 9-000 շրջանավարտ: 1936 թվականին այդ բուհե-  
րի շրջանավարտների թիվը հասավ 36 հազարի, այսինքն՝ այդ  
ժամանակամիջոցում ավելացավ 4 անգամ: Ծանր Արդյունաբե-



բուժյան ժողովմատի բուհերում սովորողների ընդհանուր թիվը 1930 թվականին յեղած 57,5 հազարից 1936 թվականին հասավ 108,6 հազար հոգու, այսինքն՝ 6 տարվա ընթացքում ավելացավ մոտ 2 անգամ: Նույն ժամանակամիջոցում Ծանր Արդյունաբերության ժողովմատի տեխնիկումների սովորողների թիվը 42,7 հազարից հասավ 88 հազար հոգու:

Վերջին տարիներս ծավալվեց արտադրության մեջ աշխատող բանվորների տեխնիկական ուսուցումը: Ծանր արդյունաբերության բանվորների յերկու յերրորդից մինչև յերեք քառորդ մասն ընդգրկված է տեխնիկական ուսուցմամբ՝ զանազան դպրոցներում ու դասընթացներում: Տեխնիկական ուսուցումն անչեղորէն ծավալվում է նաև արդյունաբերության մյուս ճյուղերում:

Այս ամենը վկայում է, վոր տնտեսական-տեխնիկական կադրերի պատրաստման գործում, ընդհանրապես վորակյալ արդյունաբերական աշխատողների նոր կադրեր ստեղծելու անպարկոյում վերջին տարիներս հսկայական գործ է կատարվել:

Այժմ մենք արդէն այնքան թույլ չենք տեխնիկական տեսակետից, ինչպես Շախտի գործի չըջանում և «Արդյունաբերական կուսակցութեան» ժամանակաշրջանում: Մենք շատ բան ենք արել, վորպեսզի կենսագործենք տեխնիկային ու արտադրութեան տիրապետելու լողունը: Այժմ մենք ունենք մեր սեփական, խորհրդային տնտեսական-տեխնիկական կադրերը, վորոնք հիմնականում տիրապետել են իրենց գործին: Նրանց թիվն արդէն քիչ չէ, նրանք ամուր են կանգնած իրենց վորքերի վրա:

Սակայն, պետք է խոստովանել, վոր տեխնիկային տիրապետելու խնդրի իրագործումը շատ դեպքերում տեղի յեր ունենում միակողմանի կերպով, վնաս հասցնելով կադրերի բոլջևիկյան դաստիարակութեանը: Մեր շատ աշխատողներ, տիրապետելով տեխնիկային, իրենց քաղաքական զարգացմամբ հետ են մնացել ժամանակակից, ավելի բարդ քաղաքական խնդիրներից:

Նեղ գործամուկութունը, մտահորիզոնի սահմանափակումը նեղ տնտեսական չըջանակներով, կուսակցական-քաղաքական խնդիրներից կտրվելը և այդ բոլորից ծնունդ առած քաղաքական կարծատեսութունը բաժին ընկան մեր տնտեսական ճակատի շատ աշխատողներին: Բոլջևիկյան զգաստութունը բարձրացնելու փոխարեն արդյունաբերութեան և տրանսպորտի շատ աշխատողներ քաղաքականապես հետ մնացին, ընկան քաղքենիական բարեհոգութեան, քաղաքական անհոգութեան հունը: Պետք է խոստո-

վանել, վոր մեր տնտեսավար ընկերներից շատերը—ասենք վոչ միայն տնտեսավարները—տարվելով հաղողութուններով ու պլանների դերակատարումով, մեծ տուրք տվին ինքնահանգը—տացմանն ու ինքնագոհութեանը, վորոնք այնքան խորթ են բոլջևիկյան հատկութուններին:

Կուսակցութունն առաջադրեց՝ «Բոլջևիկները պետք է տիրապետեն տեխնիկային» լողունը: Կարծես հասկանալի յէ, վոր խոսքը վերաբերում էր բոլջևիկների կողմից տեխնիկային տիրապետելուն, վոր կուսակցութունը տնտեսավարներին կոչ էր անում տիրապետելու տեխնիկային այնպես, ինչպես վայել է բոլջևիկներին: Գործնականում հաճախ ստացվում էր այնպես, վոր մեր ընկերները, տիրապետելով տեխնիկային, մոռանում էին իրենց բոլջևիկյան պարտականութունները և քաղաքականապես վոչ թէ առաջ, այլ դեպի հետ էին գնում: Դրանից ոգտվեց թշնամին, վորպեսզի վոչ միայն շարամտորեն ծիծաղի մեր վորոչ, նույնիսկ շատ խոշոր աշխատողների քաղաքական կարծատեսութեան վրա, այլև խոշոր վնաս հասցնի պետութեանը: Մեղ մոտ շատ անգամ այնպես էր լինում, վոր տեխնիկային տիրապետելն ընթանում էր աշխատողի բոլջևիկյան հատկութունների թուլացման հետ միասին: Իսկ մեզ համար անհրաժեշտ է տիրապետել տեխնիկային՝ բառիս լրիվ իմաստով ել ավելի ուժեղացնելով մեր կադրերի բոլջևիկյան հատկութունները:

Սրանից յերևում է, թէ մենք ինչպիսի պահանջներ պետք է առաջադրենք մեր տնտեսական կադրերին: Յես կանգ կառնեմ դրա վրա ավելի մանրամասնորեն:

Հասկանալի յէ, վոր նախ՝ այդպիսի պահանջների թիվն է պատկանում իր գործը գիտեցալը, այլ խոսքով՝ տեխնիկային, արտադրութեանը և ամբողջ հանձնարարված գործին կատարելապես տիրապետելը, ինչպես պահանջվում է իսկական դեկավարից: Մեր դեկավար կադրերին առաջադրվող այդ պահանջը վորեւէ չափով թուլացնելու մասին խոսք անգամ լինել չի կարող: Ընդհակառակը, տրոցկիստական և ոտարերկրյա գործակալութեան կատարած վնասարարութեան, դիվերսիաների ու լրտեսութեան դասերը, գործակալութուն, վորը քանիցս քթից բռնած ման է անել մեր տնտեսական դեկավարներին,—ընդգծում են տեխնիկային տիրապետելու համար հետագա համառ պայքար մղելու անհրաժեշտութունը: Ով դեռ ինչպես հարկն է չգիտե հանձնարարված աշխատանքը, նա պետք է ուսումնասիրի գործը, թափանցի դրա



մեջ, սովորի աշխատել: Սովորի վոչ միայն բարեկամներից, այլև թշնամիներից, վոչ միայն յերկրի ներսում, այլև արտասահմանում, բոլորից, ումնից վոր կարելի յե, վորպեսզի տիրապետի իր գործին ինչպես հարկն ե, բառիս լրիվ իմաստով: Այժմ առանց իր գործը լրջորեն դիտենալու իսկական ղեկավար չի կարող լինել աշխատանքի վոչ մի ասպարեզում:

Իմֆաֆմնադատության ընդունակություն, այդ ընդունակութեան զարգացում—այս ե մեր կադրերին առաջադրվող յերկրորդ պահանջը, վորը պետք ե վճռաբար ընդգծել տրոցկիստների վնասարարութեան դասերի կապակցութեամբ: Առանց այդ ընդունակութեան զարգացնելու, առանց իրական ինքնաքննադատութեան չի կարող լինել մեր կադրերի իսկական առաջխաղացում: Առանց ինքնաքննադատութեան ընդունակութեան զարգացնելու, չի կարելի յերազել տեխնիկայի տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկիրներին հասնելու ե նրանցից անցնելու խընդիրն իրագործելու մասին: Մենք ամբողջ ժողովրդական տնտեսութեան ընդունակութեան վերակառուցում ենք, մենք ուղում ենք արմատացնել ե արմատացնում ենք նոր տեխնիկան, առաջավոր արտադրական մեթոդները, ժամանակակից բարձրագույն արտադրական նորմաները: Մենք առաջ ենք դնում այդ ճանապարհով, սակայն դեռ շատ բանում հետ ենք մնում տեխնիկայի տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկիրներից: Ժամանակակից տեխնիկայի բոլոր նվաճումներին ավելի արագորեն տիրապետելու համար մենք պետք ե մանրադնին ստուգման, լուրջ քննադատութեան յենթարկենք մեր աշխատանքը, մեր նվաճումներն ու հաջողութունները: Ձի կարելի հանգստանալ յեղած հաջողութուններով, պետք ե փնտռել այն պատճառները, վորոնցով մենք դեռ շատ դեպքերում զգալիորեն հետ ենք մնում տեխնիկական—արտադրական տեսակետից առաջավոր ոտարերկրյա պետութեաններից, աշխատանքի արտադրողականութեան ասպարեզում նրանց հասած մաղարդակից, նրանց արտադրական նորմաներից ե աշխատանքի վորակից:

Առանց ինքնաքննադատութեան, առանց իսկական ինքնաքննադատութեան ընդունակութեան զարգացնելու չի կարելի առաջ շարժվել: Մեր պայմաններում այդ առանձնապես կարևոր ե: Մեր պայմաններում տեղի յե ունենում նոր տեխնիկական կադրերի արագ աճում. քիչ չեն այնպիսի ընդունակ մարդիկ, վորոնք ցանկանում են իրենց նախաձեռնութեամբ, գործնական

վործով ու գիտելիքներով ոգնել գործին: Պետք ե մեր աշխատողների մեջ դաստիարակել ներքևից՝ շարքային աշխատողների ու տեխնիկների կողմից տրվող ազդանշանների նկատմամբ զգայուն վերաբերմունք ե այդ ազդանշաններին ունիղրելու կարողութեան: Պետք ե հասնել այն բանին, վոր ղեկավարն այդ ազդանշաններին չինովնիկի անհոգի վերաբերմունք, բարձրաստիճան իշխանավորի գոռգոռութեան ցույց չտա: Ուշադրութեան պետք ե դարձնել նույնիսկ այն ժամանակ, յերբ ազդանշանը դալիս ե խորթ միջավայրից ե մեզ համար խորթ դրդապատճառներով: Յեթե մենք զարգացնենք այդ ընդունակութեանը, այդ ազդանշանների մեջ բոլիկորեն թափանցելու, մեր աշխատանքի ամեն մի՝ յերբեմն բացարձակորեն ստուգված թվացող դրութեան ստուգման յենթարկելու ընդունակութեանը, այն ժամանակ մենք ավելի արագորեն կուղղենք մեր թերութեանները ե կկանխենք շատ վնասարարների ու դիվերսանտների մեքենայութեանները: Իսկ ինքնաքննադատութեան թուլացումը, այդ քննադատութեանը զարգացնելու անընդունակութեանը տանում ե դեպի բյուրոկրատացում ու քարացում, վորը հեշտութեամբ ողտադործում են մեր թշնամիներն իրենց հակախորհրդային նպատակներով, վնասարարութեան ե դիվերսիոն—լրտեսական աշխատանք կատարելու նպատակներով: Վորքան մենք ավելի զարգացնենք մեր աշխատանքի թերութեանները վերլուծելու մեր կարողութեանը, դրականն ու ստեղծարարը ձևական—բյուրոկրատականից տարբերելու կարողութեանը, այնքան ավելի կաճեն մեր կադրերը՝ վորպես իսկական բոլիկյան կադմակերպիչներ, ե տեխնիկայի, արտադրութեան ու այլ ասպարեզներում մեր յերկրի ժողովրդական տնտեսութեան այնքան ավելի արագ կհասնի ժամանակակից առաջավոր ցուցանիշներին ու կանցնի դրանցից: Յերբ մենք միացնենք այնպիսի հատկութեաններ, ինչպիսիք են գործը գիտենալը ե ինքնաքննադատութեան ընդունակութեանը, մենք կմաքենք մեր ճանապարհն ամեն տեսակ վնասարարներից ե կապահովենք ժամանակակից ամեն տեսակի տեխնիկական ու արտադրական ցուցանիշներին հասնելու գործը:

Ազնվություն պետութեան վերաբերմամբ—այս ե տնտեսական —տեխնիկական կադրերի մի այլ հատկութեանը, վորը մենք պետք ե ամեն կերպ դաստիարակենք ու ամրապնդենք: Մեր յերկրում, վորտեղ տնտեսական ու կուլտուրական հիմնական արժեքները պատկանում են աշխատավորների կամքն իրականացնող պե-



տությանը, վորտեղ, մյուս կողմից՝ շատ ղեկավարներ անհոգու-  
թյուն են ցուցաբերում գողերի ու պետական զանձարանը կո-  
ղոպտողների դեմ պայքարելու գործում և վորտեղ դեռ այնքան  
ուժեղ են մանր բուրժուական կամ, այլ խոսքով, գիշատիչ-  
անարխիական սովորութիւնները պետապարտի աշխատողների  
մեջ—վո՛չ մի կերպ չի կարելի վիրավորական համարել այն հի-  
շեցումը, թե անհրաժեշտ է դաստիարակել մեր կադրերը պե-  
տության հանդեպ իսկական բարեխղճություն ու աղնվություն  
ցուցաբերելու վողով: Այնինչ, կարիք է լինում դրա մասին խո-  
սել կրկին ու կրկին, վորովհետեւ մեզ մոտ քիչ չեն պետությանը  
խաբելու փաստերը, վորոնք յերբեմն, համոթ մեզ, տեղի յեն  
ունենում ղեկավարների, այդ թվում նաեւ կուսակցական ղեկա-  
վարների խրախուսմամբ: Ածխի հանույթը Դոնբասում ավելի  
ցույց տալը—հենց միայն այդ՝ շատ բան է նշանակում: Վորքան  
եւ մենք նախատել ենք այդ բանի համար, վորքան եւ դատի յենք  
տվել, այնուհանդերձ դեռ այժմ եւ արմատախիւ չենք արել Դոն-  
բասի և այլ շրջանների հանքահորերում ածխի հանույթն ավելի  
ցույց տալու շատ խաբեբայութիւններ: Մի՞թե մեր ղեկավարնե-  
րի մեջ չկան այնպիսի աշխատողներ, վորոնք մատների արան-  
քով են նայում ածխի հանույթն ավելի ցույց տալուն, վորոնք  
վերադաս որդանների առջև իրենց դրութիւնն ավելի լավ ցույց  
տալու նպատակով՝ ստորագրում են անճիշտ ռապորտներ կա-  
ռուցումներն ավարտած և արտադրական պլանները կատարած  
լինելու վերաբերյալ, այն ժամանակ, յերբ դրանք իսկապէս դեռ  
կատարված չեն: Ավելի շուտ առաջ դնալու, թեկուզ մի վայր-  
կյան փայլելու նպատակով, յերբեմն վոչ վատ կազմակերպիչ  
տնտեսավարներն եւ դիմում են կեղծիքի, պետությանը խաբե-  
լուն: Իսկ այդպիսի կարյերիստ ղեկավարների շուրջն արդեն  
փնտռեցեք բազմաթիւ քծնողներ ու ստորաքարչներ, վորոնց թի-  
կունքում այնքան հարմար է թագնվել ամեն տեսակ վնասարար  
սրիկաների համար: Մեր պայմաններում աշխատանքային կար-  
գապահության թուլացումը ձեռնարկութիւններում ու հիմնարկ-  
ներում ձեռնտու յե միայն աշխատավորների ամենավոխերիմ  
թշնամիներին: Մեր պայմաններում պետությանը խաբելու յե-  
րեույթին մատների արանքով նայելը հիմնարկների ու ձեռնար-  
կութիւնների ղեկավարների կողմից, թեկուզ ռապորտ տալու և  
«հաջողութիւններով» պարծենալու համար, կամ սոսկ թուլա-  
կամութիւնն այդ գործերում, մի ձեղքվածք է, վորի մեջ իրենց

գլավաճան թաթն են կոխում դիվերսանտը, վնասարարն ու լըր-  
տեսը, վորոնք հո այնքան կարիք ունեն մեր ղեկավարների «բա-  
րյացակամությանը»՝ պետությանը վնասելու համար: Առանց  
լուրջ ու մշտական պայքար մղելու մեր կադրերին պետությանն  
աղնվորեն վերաբերվելու վողով դաստիարակելու համար, չի  
կարելի հաջողութիւն ապահովել սոցիալիզմի մեծ խնդիրները  
լուծելու գործում, չի կարելի վերջ տալ մարդկանց գիտակցու-  
թյան մեջ յեղած գիշատիչային, մանր-բուրժուական մնացուկ-  
ներին:

Մենք պետք է բարձր աստիճանի վրա դնենք մեր տնտեսա-  
վարների ու ինժեներ-տեխնիկական կադրերի գործիմացութիւ-  
նը, ինքնաքննադատության ընդունակութիւնը, աղնիւ վերաբեր-  
մունքը դեպի պետութիւնը: Մենք պետք է զարգացնենք այդ  
բոլոր հատկութիւնները մեր աշխատողների մեջ:

Սակայն մեզ առանձնապէս անհրաժեշտ է բարձրացնել զգա-  
տութիւնը քշմամու հանդեպ, հաղթահարել քաղաքական կար-  
ճատեսութիւնը և մեր բոլոր ղեկավարներին պատվաստել իրենց  
պարտականութիւնների իսկական բոլշևիկյան ըմբռնում:

Առանց այդ հատկութիւնն ուժեղացնելու, խորհրդային  
կադրերի լուրջ դաստիարակության մասին վոչ մի խոսք չի կա-  
րող լինել: Յերբ կուսակցութիւնն առաջադրեց «բոլշևիկները  
պետք է տիրապետեն տեխնիկային» լողունդը, նա պահանջում  
էր, վոր բոլշևիկները տիրապետեն մի ղենքի ևս՝ առաջավոր  
տեխնիկայի ղենքին: Իսկ իրականում ի՞նչպէս է կիրառվել այդ  
լողունդը: Իրականում շատ ընկերներ, առաջ դնալով տեխնիկա-  
յի ասպարեզում, անփույթ վերաբերվեցին իրենց քաղաքական  
պարտականութիւններին, կտրվեցին քաղաքականութիւնից,  
անձնատուր յեղան խայտառակ անհոգության թշնամու հանդեպ:  
Իհարկէ, հեշտ գործ չե միաժամանակ յերկու խնդիրներն եւ  
իրագործել՝ աճել տեխնիկային տիրապետելու գործում և բոլ-  
շևիզմին տիրապետելու գործում: Բայց յեթե դու բոլշևիկ ես,  
ապա մի խնդիրը չպետք է փոխարինես մյուսով, կամ գոնե նը-  
կատված թերացումը պետք է վերացնես: Այն դասերը, վորոնց  
մասին խոսում ենք մենք այժմ, բավականաչափ ուսանելի յեն,  
վորպէսզի խոստովանենք, վոր շատ ղեպքերում մեզ մոտ այդ-  
պէս չի յեղել: Այդ դասերը մեզնից պահանջում են, վոր մենք  
ուղղենք այդ խոշոր թերութիւնները, վոր մենք տեխնիկային  
տիրապետելը հակադրենք բոլշևիզմին տիրապետելուն, այլ



ձգտենք, վոր մեր կազմերը տեխնիկային տիրապետելու հետ մի-  
ասին՝ աճեն նաև իրենց բուլճարիկյան գիտակցությամբ:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Պլենումի բանաձևում ասված է.

«ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Պլենումը չի կարող անցնել այն անցանկա-  
լի յերևույթի կողքով, վոր արոցկիստական գիվերսաններին յերևան  
բերեն ու մերկացնել հենց, այն բանից հետո, յերբ արոցկիստները  
գիվերսիոն աշխատանքն ակներև դարձավ, տեղի յեր ունենում արդյու-  
նաբերության ու տրանսպորտի մի շարք որդանների պատկերասրահի պայ-  
մաններում: Տրոցկիստներին մերկացնում էյին սովորաբար Ներքոբո-  
ժողկոմատի որդանները և կամավոր կերպով՝ կուսակցության առանձին  
անդամները: Իսկ իրենք արդյունաբերության որդանները, վորոչ չափով  
նաև տրանսպորտի որդանները, վոչ ակտիվություն և վոչ էլ, մանա-  
վանդ, նախաձեռնություն էյին ցուցաբերում այդ դործում: Դեռ ավելին՝  
արդյունաբերության մի քանի որդաններ նույնիսկ արդելակում էյին  
այդ դործը»:

Ճի՞շտ է արդյոք այս ցուցումը, թե ճիշտ չէ: Ճի՞շտ է ար-  
դյոք, վոր մեր տնտեսավարները չէյին ողնում վնասարարու-  
թյան մերկացմանը, իսկ յերբեմն նույնիսկ արդելակում էյին  
այդ: Այո՛, ճիշտ է: Այդ չէս հերքի:

Մենք հսկայական հաջողություններ ունենք տնտեսական ու  
կուլտուրական շինարարության ասպարիզում, բայց աճում են  
նաև մեր քաղաքական խնդիրները: Մենք պետք է հաշվի առնենք  
նաև այն փաստը, վոր մեր դասակարգային թշնամին զիմում է  
պայքարի նոր, ավելի խորամանկ, ավելի քողարկված մեթոդ-  
ների: Մեր ղեկավարներից պահանջվում է կարողանալ ճանաչել  
ու մերկացնել թշնամու այդ նոր մանյովրները: Դրա համար ան-  
հրաժեշտ է ընդարձակել մեր կազմերի քաղաքական մտահորի-  
զոնը, պատվաստել նրանց աչալրջություն թշնամու հանդեպ՝  
ինչով ել դիմակալորվի թշնամին: Միմիայն այդ գեպքում, մի-  
միայն այդ բուլճարիկյան հատկություններով է, վոր մեր տնտե-  
սավարները և մյուս աշխատողներն արժանի կլինեն իսկական ղե-  
կավարի անվան:

Ճապոն-դերմանական-արոցկիստական գործակալների մեր-  
կացված վնասարարության, գիվերսանների ու լրտեսության  
բազմաթիվ փաստեր վկայում են, վոր այժմ մեր տնտեսական-  
տեխնիկական կազմերի մեջ շատ դեպքերում հարկավոր բուլճարի-  
կյան հատկությունները բացակայում են: Այդ պատճառով մեզ  
մոտ բազմացել են բավական թվով վնասարարներ, գիվերսան-  
ներ ու լրտեսներ: Այդ պատճառով մեր աշխատողները վատ են

ճանաչում արոցկիստներին և այլ յերկերեսանիներին: Ժամանակն  
է լրջորեն պայքարի ձեռնամուխ լինելու այդ խայտառակ յերե-  
վույթների դեմ:

Որինակներ բերեմ, թե ինչպես մի քանի դեպքերում մեզ  
հաջողվել է վիժեցնել արոցկիստ-վնասարարների գիտավորու-  
թյունները: Վորպես որինակ վերցնեմ քիմիայի հարցերը, վոր-  
տեղ, շնորհիվ ընկեր Որշոնիկիձեյի միջամտության, ձախողվե-  
ցին մի շարք խոշոր վնասարարական պլաններ:

Ծծմբաթթվային արդյունաբերության մեջ արոցկիստական  
վնասարարներն աճեն կերպ աշխատում էյին նվազեցնել գործա-  
րանների արտադրական կարողությունը: Նրանք մեծ ջանք էյին  
թափում ապացուցելու, վոր այդ գործարանների կարողությունը  
չի աղահուլում ծծմբաթթվի արտադրության ուղղվածված պլա-  
նի կատարումը: Ստուգումից հետո պարզվեց, վոր ինտենսիֆի-  
կացիայի յենթարկելով արտադրական պրոցեսը՝ կարելի յե գոր-  
ծող սարքավորումով տալ 60 տոկոս ավելի ծծմբաթթու, քան  
ուղղվածված էր: Դրա շնորհիվ արդեն 1934 թվականին հնարա-  
վոր յեղավ ծծմբաթթվի գործարաններին տալ մի արտադրական  
պլան, վորն զգալիորեն գերազանցում է այն բանին, ինչ առաջ-  
ներում կոչվում էր «գործարանների արտադրական կարողու-  
թյուն», թեպետ ինտենսիվացման աշխատանքը դեռ չի ավարտ-  
ված: Պետք է շարունակել արդյունաբերության այդ ճյուղում  
վնասարարական գործերը մերկացնելու աշխատանքը, և մենք  
նոր հաջողություններ ձեռք կբերենք:

Ահա մի այլ որինակ: Ծանր արդյունաբերության ժողկոմա-  
տի «Գլավորգիխպրոմն» արդյունաբերության մի այլ ճյուղում  
արդյունաբերության արտադրական կարողությունը կրկնապատ-  
կելու համար պահանջեց վո՛չ ավելի վո՛չ պակաս, քան 1300 մի-  
լիոն ուրբլի հիմնական ներդրում: Այստեղ ել գործարաններում  
արտադրություն ինտենսիվացնելու խնդիրը, վոր առաջադրել  
եր ընկեր Որշոնիկիձեյ, հնարավորություն տվեց հարցն այլ կերպ  
լուծելու: Այդ գործարաններում արդեն կատարված աշխատանքը  
հնարավորություն տվեց պարզելու, վոր կարողությունը կրկնա-  
պատկելու համար անհրաժեշտ է վոչ թե 1300 միլիոն ուրբլի,  
այլ 350 միլիոն ուրբլի, թերևս դրանից ել պակաս: Վնասարարա-  
կան պլանները՝ պետության հանդեպ իրենց անադնիվ-գուփողական  
պահանջներով հանդերձ՝ այդ գործում ևս մերկացվեցին:

Յերկրի պաշտպանություն համար մեծ նշանակություն ունե-



ցող ծծմբաթթվային և արդյունաբերության այլ ճյուղերի ուրիշակները բավականաչափ ուսանելի յեն։ Այդ ուրիշակները ցույց են տալիս, թե ինչպես սանձարձակ վնասարարները հակահարված ստացան ժողովրդատի ղեկավարությունից։ Բայց այդ դեպքերում ել մեզ չհանդիպեց ժամանակին յերևան հանել վնասարարությունն ու վնասարարներին։ Տվյալ դեպքում վնասարարական պլանները տապալվեցին, սակայն վնասարարների կազմակերպությունը մատայնակի և ուրիշների զլխավորությամբ՝ մինչև վերջին ժամանակներս մնացել եր չմերկացված։

Բոլորին ել հայտնի յե Հաղորդակցության ծանապարհների ժողովրդատում այսպես կոչված «սահմանայնություն» դեմ մղվող պայքարը։ Հաղորդակցության ծանապարհների ժողովրդատում տրոցկիստ վնասարարները փորձեցին իրենց հակապետական աշխատանքը սքողել դիտությունամբ և տեխնիկական նկատառումներով, աշխատելով ապացուցել, թե անհնարին ե բռնման հետագա ավելացումը յերկաթուղային տրանսպորտում՝ առանց նոր մեծ կապիտալ ներդրումների։ Ինչպես հայտնի յե, վնասարար «սահմանայնություն» պլանները վիժեցին։ Ընկեր Կազանովիչը հանդուրժյամբ պայքար ծավալեց Հաղորդակցության ծանապարհների ժողովրդատի «սահմանայնություն» դեմ, և, ինչպես հայտնի յե, այդ դրական մեծ արդյունքներ տվեց։ Վնասարար-«սահմանայնություն» կեղծ-գիտական և կեղծ-տեխնիկական առարկությունները ջախջախվեցին յերկաթուղային տրանսպորտի գործնական հանդուրժյուններով։ Դրանով մեծ գործ կատարվեց պետություն համար։ Բայց ամբողջ բանը հենց այն ե, վոր վնասարարները Հաղորդակցության ծանապարհների ժողովրդատի միայն պլանային որդաններում չեյին նստած, վորոնք քարոզում եյին «սահմանների թերիան»։ «Սահմանայնություն» ջախջախվելուց հետո Հաղորդակցության ծանապարհների ժողովրդատի տրոցկիստական վնասարար կազմակերպությունը պահպանեց իր պոյությունը և շարունակեց իր դավաճանական գործը, հատկապես մարզվելով ավարիաներ ու խորտակումներ կազմակերպելու գործում։ Այդ մեզ ավելորդ անգամ հիշեցնում ե, վոր անհրաժեշտ ե վնասարարության ու վնասարարների դեմ պայքար ծավալել մինչև վերջը։

Հարկավ, վնասարարներին մերկացնելու գործը գրված ե նայն և առաջ ներդրործժողովրդատի որդանների վրա։ Բայց չի կարելի վնասարարներին մերկացնելու ամբողջ պատասխան

նստվությունը բարդել ներդրործժողովրդատի որդանների վրա։ Իսկ ղեկավարները հո մի բանի համար նստած են իրենց կազմակերպություններում, նրանք հո աղդանչաններ ստանում են իրենց ապարատի աշխատողներից. չե՞ վոր նրանք պետք ե դեթ յերբեմն ղգան թշնամու կողմից սպառնացող վտանգը, յերբ թըշնամին դավեր ե լարում։

Արդյոք այժմ հասկացե՞լ են մեր տնտեսական ղեկավարներն իրենց բոլշևիկյան պարտականությունները՝ վնասարարների, դիվերսանտների ու լրտեսների դեմ պայքարելու գործում, —ահա թե վորն ե գլխավոր հարցը։ Այդ դեռ հարկավոր ե ապացուցել։ Այդ պետք ե ապացուցի յուրաքանչյուր ղեկավար՝ իր պոստում, իր աշխատանքում։ Առանց դրան չի կարելի բարձրացնել կադրերի քաղաքական դաստիարակությունը, ուժեղացնել ղգաստությունը և թշնամու դեմ պայքարելու կարողությունը։ Ղեկավարները պարտավոր են գոնե այժմ, յերբ շատ փաստեր արդեն բացահայտված են, իրենց աշխատողներին բացատրել, թե վորտեղ են սխալվել նրանք, ով ե թույլ տվել այդ թերացումները, ինչու յեն տեղի ունեցել այդ փաստերը։ Այլ կերպ ի՞նչպես կարելի յե հարկադրել մարդկանց մտածել իրենց թերությունների մասին, այլ կերպ ի՞նչպես կարելի յե ընդարձակել աշխատողների քաղաքական մտահորիզոնը, յեթե մենք այդ նրանց չսովորեցնենք կոնկրետ որինակներով, աշխատանքի կոնկրետ սխալներն ու թերությունների վրա։

Վոմանք կարծում են, թե կարդարանան, յեթե խոստովանեն «վորոչ ողակներում» ունեցած իրենց «վորոչ թերություններ»։ Բայց այդ խոսքերը վոչ մի կոպեկ չարժեն։ Այն ղեկավարը, վորի մոտ յերևան են հանվել խոչոր թերություններ, վտանգավոր վնասարարներ, քաղաքական անհույսության կարեոր փաստեր, պետք ե աղնվորեն, կոնկրետ որինակներով բացատրի այդ յերևույթների պատճառներն իր աշխատողներին, իր ակտիվին։ Միմիայն այդպես կարելի յե կանխել նոր ճախողումները և թշնամիների նոր դավերը։ Առանց դրան չի կարելի խոսել կադրերի բոլշևիկյան դաստիարակության մասին, առանց դրան ղեկավարը ղեկավար չե, այլ բյուրոկրատ, բարձրաստիճան իշխանավոր, ինչ ուղեք, բայց վո՛չ բոլշևիկյան ներկայացուցիչ պատասխանատու պոստում։

Մենք գործնական մեծ աշխատանք ունենք կատարելու վնասարարությունը վերացնելու ուղղությամբ։ Թե վորքան հանդու-



դուրսամբ գլուխ կրեւենք տվյալ խնդիրը, այդ կախված կլինի այն բանից, թե կկարողանա՞նք արդյոք բուլչեիկներն մոտենալ այդ կարևոր հարցին: Մեծ վտանգ կա, վոր մեր մի քանի տնտեսավարները դեռ վատ են հաշվի առել վնասարարութեան դասերը, դեռ չեն աղատվել քաղաքական անհոգութեանից ու մակերեսորեն, անլուրջ են վերաբերվում այդ դոքմին:

Այժմ մեկ-յերկու ուրինակ բերեմ, վորոնք ցույց կտան, վոր վնասարարութեան փաստերի մերկացումը հասարակ բան չէ:

Այդ տեսակետից տիպիկ կարելի չէ համարել անադի ասպարեզում տիրող դրութեանը: Յերկար ժամանակ անադի, արդյունաբերութեան վնասարարները տապալում եյին մեր լավ մտադրութեանները: Մենք անադի կարիք ունենք, մեծ միջոցներ ենք ծախսում անադ ներմուծելու համար, ուստի թվում է, թե Ծանր Արդյունաբերութեան Ժողովոմատը պետք է կարողանար ճիշտ կազմակերպել այդ դոքմը և վերջ տար ամեն տեսակ վնասարարների ու պոչականների այն խայտառակ դատողութեաններին, թե խՍՀՄ-ում անադի հանքեր չկան: Բայց համոթ մեզ մինչև այժմ էլ մեզ չի հանդիմել այդ անել: Մոտ յերեք տարի առաջ, հակառակ գլխավոր վարչութեան, հարկ յեղավ դատի տալ համապատասխան տրեսորի ղեկավարութեանը և մի քանի աշխատողների, վորոնք բացահայտորեն վիժեցնում եյին այդ դոքմը: Սակայն, անադի արդյունաբերութեան անձնակազմի նորոգումն ե-յական բարելավում չստանալուց: Պատահովին հանդիմեց «Գլխա-նիկելուլուլոյում», վորին յենթակա յե անադի արդյունաբերութեանը, նստեցնել կուսակցական տոմս ունեցող մի վնասարարի՝ Յադիկովին, և մեր յերկրում անադի արտադրութեանը մինչև այժմ էլ դեռ մնում է խղճուկ դրութեան մեջ: Այնուամենայնիվ, տարակույս չկա, վոր այժմ միջոցներ ձեռք առնելով անադի արդյունաբերութեանը վնասարարներից մաքրելու ուղղությամբ և հաշվի առնելով վերջին ժամանակվա դասը, մենք արագորեն առաջ կմղենք այդ աշխատանքը:

Մինչև վերջը չմերկացված վնասարարութեան մի այլ ուրի-նակ կարելի չէ համարել «Ուրալվադոնստրոյը»: Խոսքը վերաբերում է խոշորագույն վադոնաշինական գործարանին, վորն առաջիկա տարիներին պետք է տա արդի տիպի վադոնների գլխա-վոր մասսան: Մի շարք տարիների ընթացքում այդ շինարարութեանը գլուխ եր կանգնած ամենաակտիվ վնասարար Մարյասի-նը, ըստվորում վնասարար եր նաև «Ուրալվադոնստրոյը» կու-

սակցական կոմիտեյի քարտուղարը՝ տրոցկիստ Ծալիկո Ոկուջա-վան: Մի քանի ամիս է, վոր այդ վնասարարները մերկացված են: Թվում է, թե դրանից պետք եր համապատասխան դաս վերց-նել: Թե վորքան ենք կարողացել այդ անել, յերևում է հետևյա-լից:

Այս տարի փետրվարին Ծանր Արդյունաբերութեան Ժողովո-մատի հանձնարարութեամբ «Ուրալվադոնստրոյի» վնասարարա-կան գործերն ստուգելու համար գնացել եր հեղինակավոր հա-տուկ հանձնաժողով: Այդ հանձնաժողովին գլուխ եյին դրվել այնպիսի ընկերներ, ինչպիսիք են «Գլավստրոյարոմի» պետ ըն-կեր Գինդրուրզը և Համկ(բ)Կ Կենտկոմի անդամութեան թեկնա-ծու ընկեր Պավլունովսկին: Ի՞նչ հետևութեանների հանգեց այդ հանձնաժողովը: Հանձնաժողովն այսպես ձևակերպեց իր ընդհա-նուր յեղրակացութեանները «Ուրալվադոնստրոյի» մասին. «Ու-րալվադոն» գործարանին ծանոթանալը մեզ բերեց այն հաստատ համոզման, վոր Պյատակովի և Մարյասինի վնասարարական աշ-խատանքը շինարարութեան մեջ մեծ դարդացման չի հասել»:

Բանից դուրս է դալիս, վոր «Ուրալվադոնստրոյում» վնասա-րարութեանը «մեծ դարդացման չի հասել»: Հանձնաժողովը փորձում է հիմնավորել իր այդ յեղրակացութեանները՝ շինա-րարութեան թերութեանները համարելով միայն այն, վոր կա-տարվել են մի քանի դերածախսեր և ոժանդակ տնտեսութեան չի-նարարութեանը հետ է մնացել: Բայց հանձնաժողովի քաղաքա-կան կարճատեսութեանը կատարելապես ակնհայտ է: Նույնիսկ վնասարար Մարյասինի նախկին ցուցմունքները բավական եյին հասկանալու համար, վոր Գինդրուրզ—Պավլունովսկու հանձնա-ժողովը կոծկել է դոքմի փաստական դրութեանը շինարարու-թեան մեջ: Բավական է, յեթե ասենք, վոր այդ հանձնաժողովը շինարարութեան մեջ տեղի ունեցած վնասարարութեան վոչ մի փաստ չբերեց: Դուրս է դալիս, վոր թունդ վնասարար Մարյա-սինը և մյուս վնասարար Ոկուջավան իրենք իրենց զրպարտել են: Այնինչ, այն ժամանակ, յերբ հանձնաժողովն Ուրալ եր ուղե-վորվում, Մարյասինը տվեց նոր ցուցմունքներ, վորոնց մեջ ա-վելի կոնկրետ կերպով մատնացույց է անում, թե վորն է յեղել իր վնասարար աշխատանքը շինարարութեան մեջ: Ընդամին նա մատնանշում է «Ուրալվադոնստրոյում» տեղի ունեցած վնասա-րարութեան մի շարք փաստեր, վորոնք հարգելի հանձնաժողովի աչքից վրիպել են: Դրանից հետո, Ծանր Արդյունաբերութեան



Ժողկոմատի ընկերներ<sup>1</sup>ը, արդյոք չպե՞տք ե ընդունել, վոր հարկա-  
վոր ե մի փոքր ավելի լրջորեն ստուգել զանազան Մարյասին-  
ների վնասարարական գործերը և խոստովանել, վոր միջանի  
ստուգող հանձնաժողովներ հակված են չափազանց մակերեսորեն  
վերաբերվելու իրենց խնդիրներին:

«Ուրախազոնատրոյի» ստուգող հանձնաժողովին վերաբերող  
փաստը վկայում ե, վոր չնայած բոլոր դասերին, մենք շատ  
դանդաղ ենք վերականգնվում, շարունակում ենք տառապել  
թշնամուն ճանաչելու հմտութիւնն չունենալուց, այժմ ել մեծ  
չափով քաղաքական կարճատեսութիւն ենք ցուցաբերում:

Ծանր Արդյունաբերութեան Ժողկոմատը հավանաբար դեռ  
ավելի լրջորեն կըննի այդ գործը, բայց այժմ կարևոր ե դաս  
վերցնել այդ հանձնաժողովի աշխատանքից՝ ամբողջ վնասարա-  
րութեան հետևանքները վերացնելու համար: Այդ հանձնաժո-  
ղովի աշխատանքը ցույց տվեց, թե վորքան անբավարար եր  
կադմակերպվել տնտեսավարների քաղաքական դաստիարակու-  
թիւնը նույնիսկ այն ժամանակ, յերբ մենք գործ ունենք ծանր  
արդյունաբերութեան խոշորագույն ներկայաժողովների հետ:  
Նույնիսկ այնպիսի խոշոր աշխատողներ, ինչպիսիք են Պավլու-  
նովսկին և Գինդբուրգը, ստուգելով վնասարարների աշխատանքը  
տեղում, կարևոր չհամարեցին մատնացուց անել վնասարարու-  
թեան թեկուզ մի փաստ: Նույնիսկ նրանք ամբողջ գործը հան-  
դեցրին մանր թերութիւնների, առանց նկատելու վնասարարու-  
թիւնը: Բայց չե՞ք վոր այդ տոն ե տալիս, այն ել վատ տոն, ար-  
դյունաբերութեան մյուս աշխատողներին:

Հավանաբար նույնիսկ Ծանր Արդյունաբերութեան Ժողկո-  
մատում—եւ չենք խոսում Թեթև Արդյունաբերութեան Ժողկոմա-  
տի, Սննդարդյունաբերութեան Ժողկոմատի, Անտառային Ար-  
դյունաբերութեան Ժողկոմատի և այլ Ժողկոմատների մասին—  
գործը բարեհաջող վիճակի մեջ չե վնասարարութեան մերկաց-  
ված փաստերը քաղաքականորեն ըմբռնելու տեսակետից: Փաս-  
տերը ցույց են տալիս, վոր դեռ վաղ ե ասել, թե դոյութիւն ու-  
նի քաղաքական զգաստութիւնն թշնամու նկատմամբ: Մեր գործ-  
նական աշխատողները շատ դեպքերում քաղաքականապես այն-  
քան են հետ մնացել, նրանց քաղաքական մտահորիզոնն այնքան  
ե նեղացել, վոր հեշտ չեն ըմբռնում նույնիսկ ակնհայտ քաղա-  
քական փաստերը: Ծանր Արդյունաբերութեան Ժողկոմատի  
Հանձնաժողովի աշխատանքի արդյունքներից պետք ե մեր ամ-

բողջ աշխատանքի համար դաս վերցնենք.—մենք պատշաճ զգաս-  
տութիւն չունենք թշնամու հանդեպ, պետք ե բարձրացնել կադ-  
րերի բոլշևիկյան դաստիարակութեան գործը:

Մենք աչքաթող ենք արել տնտեսավարների քաղաքական  
դաստիարակութեան գործը: Այժմ մենք պետք ե բարձրացնենք  
նրանց քաղաքական զգաստութիւնը, լայնացնենք նրանց քաղա-  
քական մտահորիզոնը, նրանց պատվաստենք բոլշևիկյան հատ-  
կութիւններ և ուժեղացնենք դրանք: Տնտեսական կադրերի քա-  
ղաքական դաստիարակութիւնն ուժեղացնելու խնդիրն որովա  
սամենասակտուալ խնդիրն ե:

Բոլշևիկյան զգաստութեան ուժեղացումն ամբողջ սոցիա-  
լիստական շինարարութեան հետագա աճումն արագացնելու կա-  
րևորագույն պայմանն ե:

## 2. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրորդ հարցը, վորի նշանակութիւնը վնասարարութեան  
դասերի կապակցութեամբ չի կարելի չափազանցնել, աշխատող-  
ների ընտրութիւնն ե: Այս տեսակետից ևս մեր առջև այժմ բա-  
ցահայտվեցին մեր աշխատանքի մեծ թերութիւնները, վոր  
պետք ե լրջորեն հաշիւ առնել:

Սկսեմ նախկին տրոցկիստների նկատմամբ ունենալիք վերա-  
բերմունքի հարցից: Այժմ կարելի չե վորոշ դեպքերում սպասել  
մեկ ծայրահեղութիւնից դեպի մյուսը նետվելու յերևույթներ—  
տրոցկիստ—վնասարարների վերաբերմամբ յեղած անհոգութիւ-  
նից դեպի հախուռն արշավանք նախկին տրոցկիստների դեմ: Այս  
բանը չի կարելի թույլ տալ: Մենք այժմ հաճախ լսում ենք այս-  
պիսի հարց. ուրեմն՝ չե՞ կարելի գործ ունենալ նախկին տրոց-  
կիստների հետ, ուրեմն՝ պետք ե հանե՞լ պաշտոնից բոլոր նախ-  
կին տրոցկիստներին: Այսպիսի հախուռն մոտեցումն այս դեպ-  
քում ևս իհարկե սխալ ե: Մենք չենք կարող սխալ համարել  
նախկին տրոցկիստին պատասխանատու պոստում նշանակելու  
ամեն մի դեպք: Մենք չենք կարող հրաժարվել նախկին տրոց-  
կիստին պատասխանատու աշխատանքի մեջ ոգտագործելուց մի-  
միայն այն պատճառով, վոր մի ժամանակ նա դեմ ե դուրս յեկել  
կուսակցական գծին: Հարկավոր ե քննել և լուրջ կերպով քննել  
այդ հարցը, նախքան տվյալ մոմենտում նրան այս կամ այն աշ-  
խատանքի մեջ ոգտագործելուց հրաժարվելը: Ոգնելով այդպիսի  
ընկերներին վերջնականապես վերացնելու իրենց անցյալի սխալ-



ները, նրանց ստուգելով աշխատանքի մեջ, կուսակցական կադ-  
մակերպութեան վերահսկողութեան տակ, մենք կատարում ենք  
կուսակցութեան համար պիտանի գործ: Բայց մենք վո՛չ մի դեպ-  
քում չենք կարող ճիշտ համարել այնպիսի դրութիւն, յերբ նա-  
նակելով նախկին տրոցկիստին կամ ուրիշ վորեւէ մեկին, մենք  
չենք կարողանում հարկ յեղած վերահսկողութիւնը կազմակեր-  
պել նրա աշխատանքի նկատմամբ: Այս արդէն մեր մեղքն է,  
ղեկավարների մեղքը, յեթե մենք չենք կարողանում գործնակա-  
նում ստուգել, հարկ յեղած ձևով վերահսկել նախկին տրոց-  
կիստների և այլ աշխատողների աշխատանքը:

Բայց մեր մարդկանց մեջ կան նաև այնպիսիները, վորոնք  
այդ հարցում դատում են բոլորովին սխալ կերպով: Նրանք  
պատրաստ են ձեռքի մի շարժումով վորպէս տվյալ մոմէնտի հա-  
մար վո՛չ եյական գործ ընդունել կուսակցութեան դեմ տրոց-  
կիստների մղած անցյալ պայքարը: Նրանք պատրաստ են ողտա-  
գործել բոլոր նախկին տրոցկիստներին՝ առանց ընտրութեան,  
վորովհետեւ իբր թե առանց նրանց չի կարելի յոյա գնալ. մի  
բան, վոր պարզապէս ծիծաղելի յէ: Ձի կարելի չընդունել, վոր  
այդ բանի մեջ արտահայտվում է միանշանային վո՛չ-բոլշևիկյան  
վերաբերմունք գործի նկատմամբ, վոր այդ քաղքենիական ապա-  
քազաքականութիւն է՝ արմատապէս խորթ բոլշևիզմին: Դրա  
մեջ չի կարելի չտեսնել ղեկավարի ամենակարեւոր պարտականու-  
թիւններից մեկից՝ աշխատողների դասավորութեամբ և ընտրու-  
թեամբ լրջորեն զբաղվելու պարտականութիւնից—խոստալիւն  
փորձեր: Այդ գործով զբաղվելն, իհարկէ, այնքան էլ հեշտ չէ,  
ինչպէս թվում է այն ընկերներին, վորոնք այդ գործը վերա-  
հանձնարարում են իրենց ապարատի աշխատողներից ում պա-  
տահի: Պետք է ճանաչել իր աշխատողներին, պետք է հետեւել  
նրանց աշխատանքին, ստուգել նրանց աշխատանքը, քննադատել  
հետ մնացողներին և հեռացնել անընդունակներին ու բյուրո-  
կրատացածներին, նկատել նոր, աճող աշխատողներին և ակտիւ  
կերպով ողնել նրանց առաջընթացին:

Գործի նկատմամբ բոլշևիկյան մոտեցումը սահմանում է կա-  
րողանալ ստուգել աշխատողներին՝ հաշիւ առնելով նրանց գործ-  
նական ու քաղաքական հատկութիւնները: Ձի կարելի աշխա-  
տողներին ստուգել լոկ նրանց անցյալ գործունեութեան վերա-  
բերյալ հարցաթերթիկներով: Այդ խիստական ստուգում չէ: Ձի  
կարելի ղեկավարվել նրանց նախկին աշխատանքի վերաբերյալ

պատահական հիշողութիւններով ու տեղեկութիւններով: Այդ-  
պիսով հեշտութեամբ կարելի չէ վնասել գործին: Անթույլատրելի  
չէ աշխատողի պիտանիութեան հարցը լուծել անձնական կապե-  
րով ու համակրանքով: Այն ժամանակ սրանց ստորաքաղաքութիւն-  
նից ուղղակի գլուխ աղատել չի լինի: Սխալ է նաև աշխատողնե-  
րի մասին դատել ռապորտներով, թեկուզ և պլանների դերակա-  
տարման վերաբերյալ ռապորտներով: Աշխատողների ընտրու-  
թեան չափանիշը պետք է լինեն ինչպէս նրանց գործնական, այն-  
պէս էլ նրանց քաղաքական հատկութիւնները, վորոնց մասին  
ղեկավարը պետք է դիտենա, — դիտենա վո՛չ թե լսածով և վո՛չ  
թե ըստ թղթերի, այլ լրջորեն այդ մարդկանց աշխատանքին  
սխտեմատիկորեն հետեւելու, մշտապէս նրանց աշխատանքն  
ստուգելու հիման վրա: Աշխատողների այդպիսի ընտրութիւնն է  
միայն, վոր կարող է համարվել բոլշևիկյան մոտեցում գործի  
նկատմամբ:

Այն ժամանակ մենք վերջ կդնենք այնպիսի փաստերին, վո-  
րոնք չի կարելի անվանել այլ կերպ, յեթե վո՛չ խայտառակ փա-  
տեր: Բերեմ մի որինակ:

Կուղբասի Ոսինովսկի հանքի նախկին գլխավոր ինժեներ  
վնասարար Յեթովը «Կուղբասուգորի» այն ժամանակվա գլխա-  
վոր ինժեներ վնասարար Ստրոկիլովի աշխատանքի մասին տալիս  
է հետեյալ ցուցմունքը.

«Տեխնիկական քաղաքականութիւնը «Կուղբասուգորում» անբաժա-  
նելիորեն կրտոււմ է Ստրոկիլովը, և հիմնական ինժեներական կողերի  
դասավորութիւնը կատարվում է նույնպէս նրա կողմից: Նա դուրս է  
մղում խորհրդային մասնագետներին և իրեն չըջպատում է հին Փոր-  
մացիայի ինժեներներով, վորոնք անվերապահորեն յենթարկվում են  
նրան»:

Ձի կարելի ասել, վոր այսպիսի փաստերը զարդարում են  
«Կուղբասուգորի» համար պատասխանատու հանդիսացող տնտե-  
սական ղեկավարներին: Բայց չե՞ վոր սա մեկն է այն բաղմաթիւ  
փաստերից, վորոնք ցույց են տալիս, թե վորքան վտանգավոր է  
աշխատողների ընտրութիւնը ղեկավարների ձեռքից բաց թող-  
նելը, վորքան վտանգավոր է այդ գործից չինովնիկաբար խու-  
սալիլը:

Ժամանակն է ընդունելու, վոր ղեկավարը պատասխանատու  
է աշխատողների ընտրութեան համար: Ինչպիսի բարձր կոչում  
և աստիճան էլ ունենա մարդ, յեթե նա ընդունակ չէ նկատելու



իր քթի տակ աշխատող վնասարարներին և նույնիսկ չի ցանկանում խորամուկս լինել այդպիսի հարցերի մեջ, նա ղեկավար չէ, այլ կանցեյլարիստ, դատարկ չինովնիկ: Վոչ վոք ապահովադըրված չէ այն բանից, վոր նրա մոտ այս կամ այն դիմակի տակ չի սողոսկի թշնամին և ուղղակի դավաճանը,—սխալներ, իհարկե, հնարավոր են: Բայց յեթե դու քո շրջապատում թույլ տաս համատարած փտություն, յեթե քեզ շրջապատես ամեն տեսակ խորթ ու կասկածելի մարդկանցով, յեթե դու ինքդ նախաձեռնություն չցուցաբերես այդ շրջապատի դեմ պայքարելու դործում, ապա ի՞նչպես կարելի յե քեզանից հեռացնել անհոգության, աշխատողներ ընտրելու մեջ անտարբեր դառնալու, քաղաքական կարճատեսության պատասխանատվությունը: Այնքան ել հեշտ բան չէ ճանաչել նվիրվածության դիմակով, իսկ յերբեմն ել անցյալի ծառայություններով քողարկված յերկերեսանի թըշնամուն: Բայց մենք պետք է հասկանանք, վոր ղեկավարը պետք է իր մեջ զարգացնի այն հատկությունները, վորոնք անհրաժեշտ են թշնամուն ճանաչելու համար: Այն ղեկավարը, վորը հոգ չի տանում այդ հատկությունների զարգացման մասին, իր մեջ չի քարզացնում թշնամիների բոլոր ու ամեն տեսակ պրիոմները ճանաչելու, այդ թվում նաև հարմարվողականության ու յերկերեսանիության մեջ խիստ ճարպիկ դավաճանների պրիոմները ճանաչելու ընդունակություններ, նա խուսափում է բուլչեիկյան ամենահիմնական պարտականություններից մեկից:

Ո՞վ չգիտե, վոր մենք ստիպված ենք լինում աշխատանքի մեջ ոգտադործել նաև խորհրդային իշխանությանը թշնամի մարդկանց: Մենք դրանից ել հրաժարվել չենք կարող: Կան մարդիկ բուրժուական մասնագետներից, վորոնք լավ վերահսկողության տակ, ղեկավարների հարկ յեղած զգաստության պայմաններում կարող են պետությանը տալ և տալիս են շոշափելի եզրույթ: Այս դեպքում հնարավոր սխալները կանխելու համար ղեկավարները պետք է ըստ եյության թափանցեն նրանց աշխատանքի մեջ, հետևեն նրանց աշխատանքի վերաբերյալ համապատասխան ազդանշաններին, բոլոր հնարավոր միջոցներով ստուգեն նրանց աշխատանքի իսկական բնույթը, դառնեն ստուգման նոր միջոցներ այնտեղ, վորտեղ հները բավական չեն:

Հիշեցնեմ Լենինի հիանալի խոսքերն այս հարցի մասին. «Լավ է քեզ, բայց լավ» հոգվածի մեջ Լենինը կոմունիստներին հատկապես սովորեցնում էր այդ բանը: Հիշյալ հոգվածում

անմիջականորեն խոսում էր Բանդուտեսչության աշխատողների մասին, բայց ըստ եյության այդ ցուցումները վերաբերում են մեզ բոլորիս, բոլոր ղեկավարներին: Լենինն այն ժամանակ առում էր.

«...նրանք պետք է նախապատրաստեն իրենց այնպիսի աշխատանքների, վորոնց յես չենի քաշվի անվանելու նախապատրաստում՝ վորոտու, չեմ ասի—խորդախներին, բայց դրա նման մի բան, և առանձին խորամանկություններ հնարել՝ քողարկելու համար իրենց արշավանքները, ժառանգումները և այլն»:

Յեթե արևմտա-յեվրոպական հիմնարկներում նմանորինակ առաջարկները կհարուցեյին չլաված զայրույթ, բարոյական վրդովմունքի զգացում և այլն, ապա, յես հուսով եմ, վոր մենք դեռ բավականաչափ չենք բյուրոկրատացել, վորպեսզի ընդունակ լինենք այդ բանին... Մեզ մոտ դեռ այնքան նոր է կառուցված խորհրդային հանրապետությունը և դիվիզիոն և ամեն տեսակ խափն այնպիսի կույտ, վոր հաղիվ թե մեկը մտածի նեղանալու այն մտքից, թե այդ խափն մեջ կարելի յե պեղումներ կատարել վորոչ խորամանկությունների ողնությամբ, յերբեմն ղեկի բավական հեռավոր աղբյուրները ուղղված կամ բավական վերապատույթ ճանապարհով կատարվող հետախուզումների ողնությամբ, իսկ յեթե մտածի ել, ապա վստահ կարելի յե լինել, վոր այդպիսի մարդու վրա մենք բոլորս ամբողջ հոգով կծիծաղենք»:

Լենինն այնուհետև ասում էր.

«Յեթե յես վերը գրեցի, թե մենք պետք է սովորենք ու սովորենք աշխատանքի բարձրագույն կազմակերպման ինստիտուտներում և այլն, այդ ամենին չի նշանակում, վոր յես արդ «ուսումը» վորեք չափով հասկանում եմ զայրոցավարի կամ վոր յես սահմանափակվում եմ միայն զայրոցական ուսման վերաբերյալ մտքով: Հուսով եմ, վոր վոչ մի իսկական հեղափոխական չի կասկածի այն բանում, վոր յես այս դեպքում «ուսում» ասելով չեմ հրաժարվել հասկանալու վորեք կիսակատակային տարք, վորեք խորամանկություն, վորեք հնարամտություն, կամ դրա նման մի բան: Յես գիտեմ, վոր արևմտա-յեվրոպական բարեպաշտ լուրջ պետության մեջ այս միտքն իրոք սարսափ կառաջացներ, և վոչ մի կտրդին չինովնիկ չեք համաձայնի նույնիսկ նրա քննարկումը թույլ տալ: Բայց յես հույս ունեմ, վոր մենք դեռ բավականաչափ չենք բյուրոկրատացել և վոր մեզ մոտ այդ մտքի քննարկումը վոչինչ չի առաջացնում, բացի ուրախությունից:

Իսկապես, ինչո՞ւ չմիացնենք հաճելին ոգտակարի հետ: Ինչո՞ւ չոգտվենք վորեք կատակային կամ կիսակատակային արարքից՝ վորպեսզի բռնենք վորեք ծիծաղելի, վորեք վնասակար, վորեք կիսածիծաղելի, կիսամիտակար բան և այլն»:

Ահա թե Լենինն ինչպես էր սովորեցնում ստուգել աշխատողներին, յերբ խոսքը վերաբերում է պետության շահերի սլահ-



պահմանը, աշխատավորները չափերի խախտումներով թըշ-  
նամուն կամ կիսաթշնամուն մերկացնելու համար, վորեւե «վնա-  
սակար» կամ «կիսավնասակար» բան մերկացնելու համար Լենինը  
խորհուրդ էր տալիս դիմել «խորամանկություններին», «հետա-  
խուզումներին», «հնարամտություններին»: Յեթե մենք Լենինի այս  
ցուցումները լրջորեն ոգտադործելինք մեր աշխատանքում, մենք  
չառ վնասարարների մերկացրած կլինեյինք ավելի շուտ, մենք  
թույլ չեյինք տա մի շարք դիվերսիաներ, դավեր ու լրտեսական  
փտնաձուլություններ մեր դործարաններում, հանքերում, յերկա-  
թուղիներում: Գոնե ապագայի համար մենք պետք է հաշիւ առ-  
նենք Լենինի այս խորհուրդները, այնպես, ինչպես վայել է  
բուլլեիներին:

Մենք հաճախ պատասխանատու աշխատողներին լսում ենք,  
թե իրենց աշխատողներ ե տալիս կուսակցությունը, կուսակցա-  
կան կազմակերպությունը: Դրանով ուղղում են ասել, վոր այս-  
պես Մոսկված «պատասխանատու աշխատողը» պատասխանատու  
չէ իր ապարատի աշխատողների ընտրության համար, վոր յեթե  
այդ աշխատողները վատն են կամ թե ուղղակի թշնամիներ են  
դուրս յեկել, ապա պատասխանատվությունն իբր թե կրում է  
վոր թե անմիջական ղեկավարը, այլ կուսակցական կազմակեր-  
պությունը, վորն ուղարկել է աշխատողին: Այսպիսի ճառեր  
թերեւս դեռ կարող են հասկանալի լինել, յեթե զարիս են այն  
անկուսակցականների վողմից, վորոնց համար կուսակցությունն  
ոտար գործ է: Կոմունիստները չեն կարող այդպես ասել. կու-  
սակցական կազմակերպությունն իհարկե պատասխանատվու-  
թյուն է կրում կոմունիստի համար և նրանց համար, ում նա  
ուղարկում է այս վամ այն աշխատանքին, բայց այդ չի նշա-  
նակում, թե վորեւե մեկին իրավունք է տրված կեղտոտելու վու-  
սակցության անունը:

Ընդհակառակը, մեր ամենատառջնակարգ պարտականու-  
թյունն է, ղեկավարներին պարտականությունն է՝ աշխատանքի  
մեջ ստուգել կուսակցական կազմակերպության ուղարկած աշ-  
խատողներին: Ուղարկելով աշխատողին, կուսակցական վաղմա-  
կերպությունը պահանջում է ճիշտ ոգտադործել նրան, գործնա-  
կանում ստուգել նրա ընդունակությունները, վերահսկողություն  
ունենալ նրա աշխատանքի նկատմամբ: Ղեկավարի պարտակա-  
նությունն է ժամանակին կուսակցական վաղմակերպությանը  
նախադրույալները այն մարդկանց թերություններին, իսկ առավել

ևս հանցագործություններին մասին, ովքեր անմիջականորեն աշ-  
խատում են առկալ ղեկավարի մոտ: Բայց մեզ կարծես թե չի  
պատահում այնպիսի դրություն, վոր, ասենք, ղեկավար-անտե-  
սավարը մերկացնի այս վամ այն վնասարարին, իսկ կուսակ-  
ցական կազմակերպությունը պաշտպանի նրան: Գործնականում  
սովորաբար հակառակն է տեղի ունենում: Նույնիսկ վնասա-  
րարի մերկացումից հետո և չնայած կուսակցական կազմակեր-  
պության որինական պահանջին՝ նրան փոխարինելու ազնիվ աշ-  
խատողով, անտեսավարները հաճախ պաշտպան են դուրս գալիս  
խորթ մարդկանց, շատ անգամ յերեւան բերելով քաղքենիական  
անտարբեր վերաբերմունք աշխատողներ ընտրելու գործին, յե-  
րեւան բերելով քաղաքական կուրություն: Մի՞թե այդ ճիշտ չէ:

Մենք քիչ չենք պարզեցատրում անտեսավարներին շքանշան-  
ներով, զովաբանում նրանց հաջողությունները: Այդ կանենք  
նաև հետագայում: Բայց մենք ունենք այնպիսի մարդիկ, վորոնք  
հաճույքով իրենց են վերագրում ձեռնարկության և կամ թե ար-  
դյունաբերության մի ամբողջ ճյուղի հաջողությունները, իսկ  
իրենց աղատ են համարում պատասխանատվությունից իրենց աշ-  
խատանքի մեջ կատարվող քաղաքական կողիտ սխալների համար,  
վնասարարների նկատմամբ անհոգություն ու կուրություն հան-  
դես բերելու համար: Ուստի հարկ է լինում մեր ղեկավարներին  
հիշեցնելու վոր միայն իրենց բարոյական և իրավաբանական պա-  
տասխանատվությունը քաղաքական վարձատեսություն ցուցաբե-  
րելու համար, այլ առկալի մարդկանց պետք է ուղղակի ասել,  
վոր նրանք իրենց գնում են այնպիսի դրության մեջ, յերբ նրանց  
թիկունքում արոցկիստական ու այլ վնասարարները ծաղրում են  
նրանց անձարակությունը, ծիծաղում են նրանց քաղաքական  
կարճատեսության վրա: Գոնե թշնամու այդ չարախնդ ծիծաղն  
ատիպեր անհոգության ցեխի մեջ խրված մի քանի ղեկավարնե-  
րին խելքի գալու, ավելի խտրունն ստուգելու իրենց աշխատան-  
քի պատասխանատու բնազավտները, զգտտորեն հետեւելու ի-  
րենց ապարատի աշխատանքին:

Տրոցկիստական-Փաշկոտական շաղկապի մերկացված վնասա-  
րարական-դիվերսիոն աշխատանքի դատերն ընդգծում են ղեկա-  
վար պոստերում քաղաքականապես ստուգված, պետության  
նկատմամբ ազնիվ աշխատողներ առաջ քաշելու անհրաժեշտու-  
թյունը: Այնտեղ, վորտեղ թույլ են մեր վաղերը, մենք պետք  
է վճռականորեն առաջ քաշենք քաղաքականապես ստուգված,



թեկուղ և վոչ բալա՛նաճախի պատրաստված, բայց ընդունակ ու սովորելու ցանկություն ունեցող աշխատողները: Այդպիսի մարդիկ քիչ չեն: Նրանց կարելի չե և պետք է սովորեցնել աշխատել, բարձրացնել նրանց գործարար վորակը:

Ղեկավարը պետք է կարողանա ընտրել իր հիմնական աշխատողներին, ստուգել նրանց աշխատանքը, ունեն ինքնուրույն՝ ուղղելու աշխատանքի մեջ յեղած թերութիւնները, ոժանդակել նրանց քաղաքական դարգացմանը: Այն ղեկավարը, վորը չի դբադվում հիմնական աշխատողների ընտրությամբ կամ չի կարողանում բուլլեթիւններն մոտենալ այդ գործին, — ղեկավար չէ, այլ դատարկ կանցելարիստ կամ շաղակրատ: Մեզ մոտ շատ թերութիւններ կան աշխատողների ընտրության գործում, վորովհետև շատ ղեկավարներ արհամարհում են այդ գործը, մոռանալով իրենց քաղաքական պատասխանատւութիւնը, մոռանալով, վոր ստուգումը, հատկապես քաղաքական ստուգումը և աշխատողների դասավորութիւնը; այնպիսի դասավորութիւն, յերբ հաշվի չեն առնվում վոչ միայն գործնական, այլև քաղաքական հատկութիւնները, յուրաքանչյուր բուլլեթի կեկավարի կարևորագույն գործն է:

Ղեկավարը պատասխանատու յե իր կադրերի համար: Ղեկավարին պետք է ստուգել նախ և առաջ այն բանով, թե նա ինչպես է կարողանում դասավորել աշխատողներին, ինչպես է կարողանում ընտրել կադրերը՝ հաշվի առնելով նրանց ինչպես գործնական, այնպես էլ քաղաքական հատկութիւնները: Մենք հարկ յեղած դասերն առած չենք լինի տրոցկիստական բանդայի ղեկներին — լրտեսական — միասարակական աշխատանքի մերկացումից, յեթե լուրջ կերպով չբարելավենք աշխատողների ընտրութիւնը մեր տնտեսական որդաններում և ձեռնարկութիւններում, յեթե մեր ղեկավարները չհասկանան իրենց լուրջ պատասխանատւութիւնը այդ գործի համար: Իսկ բարելավելով այդ գործի կազմակերպումը, մենք ե՛լ ավելի արագորեն առաջ կբայլենք սոցիալիստական շինարարութիւն բոլոր բնագավառներում:

Բարձրացնել ղեկավարների պատասխանատւութիւնն աշխատողների ընտրութիւն համար — ահա մի կարևոր հետեութիւն ևս վրասարարութիւն դասերից:

### 3. ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Վերջապես՝ յերրորդ հարցը վերաբերում է ղեկավարման մեթոդներին:

Վերջին տարիների ընթացքում կուսակցութիւնը բացառիկ ուշադրութիւն եր նվիրում այդ հարցին: Հիշեցնեմ առաջին հերթին «Դոնբասի ածխարդյունաբերութիւն աշխատանքի վերաբերյալ» և «Յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի վերաբերյալ» ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումները, վորոնք վերաբերում են 1933 թվականի ամառվան:

Դոնբասի վերաբերյալ վորոշման մեջ — իսկ Դոնբասի գործերն այն ժամանակ չափադանց վատ էլին — ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ասացին, վոր՝

«Դեպի հետ կատարվող այդ ամօթալի շարժման գլխավոր պտտածուղ հանդիսանում է ածխարդյունաբերութիւն ղեկավարման դեռ չվերացված, վերջնականապես սնանկացած դրասենյակային — բյուրոկրատական մեթոդը, սկսած հանքահորերից և վերջացած Ծանր Արդյունաբերութիւն Ժողովրդական կոմիտարիատի վառելիքի գլխավոր վարչութիւնը»:

Յերկաթուղային տրանսպորտի վերաբերյալ վորոշման մեջ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհն ասացին, վոր՝

«Երկաթուղիների միանգամայն անբավարար աշխատանքի գլխավոր պտտածուղ ղեկավարման թերութիւններն են, կազմակերպական բնույթի թերութիւնները, յերկաթուղիների ղեկավարման դեռ չվերացված, վերջնականապես սնանկացած դրասենյակային — բյուրոկրատական մեթոդը՝ սկսած շրջաններից ու գիւղերից և վերջացած Հաղորդակցութիւն ձանապարհների Ժողկոմատի կենտրոնական վարչութիւններով»:

Կուսակցութիւնն ու կառավարութիւնն այս վորոշումների մեջ հարվածն ուղղված եր տնտեսական որդանների աշխատանքի դրասենյակային — բյուրոկրատական մեթոդների դեմ: Արդյունաբերութիւնն ու տրանսպորտի ապարատում բյուրոկրատիզմը վերացնելու մեջ եր կուսակցութիւնը տեսնում նրանց աշխատանքի բարձրացման գլխավոր խնդիրը: Կյանքը լիովին հաստատեց այդ դրույթի ճշտութիւնը: Մեր տնտեսական կազմակերպութիւններում բյուրոկրատիզմը վերացնելու ուղղութիւնը կատարվող յուրաքանչյուր լուրջ քայլ մեզ տալիս եր լուրջ հաջողութիւններ: Մենք այդ տեսնում էլինք վոչ միայն ածխարդյունաբերութիւն և յերկաթուղային տրանսպորտի որինակով:



Տնտեսական աշխատանքի մեթոդի բարելավման կարևոր մոմենտը վերջին տարիներին ընթացքում յեղել է այսպես կոչված «Փունկցիոնալություն» դեմ պայքարելը:

Մի ժամանակ ապարատի ֆունկցիոնալ կառուցման մեջ մեր տնտեսական որոշումները չափազանց հեռուն դնացին: Պրակտիկ փորձի ու զետեղիքների պակասը փորձում ելին փոխարինել բազմաթիվ, միմյանց հետ չկապակցվող ֆունկցիոնալ որոշումներ ստեղծելով: Դրա հետևանքով հաճախ ստեղծվում էր ամենաբարդ բյուրոկրատիկ ապարատ՝ իր մասերի խառնաշփոթ փոխհարաբերություններով, բազմաթիվ, դուրսհեռաբար աշխատող որոշումներով, վորոնք խանգարում էին իրար: Այդպիսի ապարատը չի կարող չծնել բյուրոկրատական անպատասխանատվություն և բյուրոկրատական խեղաթյուրումների առատություն: Վր՛չ միայն հիմնարկներում, այլև արդյունաբերական ձեռնարկություններում «ֆունկցիոնալիան» քիչ վնաս չհասցրեց մեզ:

Այսպես, որինակ, մի քանի տարի սրանից առաջ, բամբակե գործվածքների արդյունաբերության մեջ փորձեցին վերացնել այնպիսի պրոֆեսիաներ, ինչպիսին է ջուլհակությունը, ջուլհակներին ու ջուլհակուհիներին փոխարինելով անորակ բանվորներով, վորոնք կատարում էին առանձին պարզ արտադրական ֆունկցիաներ, և ջուլհակության աշխատանքը բաժանել էին այդ ֆունկցիաների համաձայն: Այդ «նորամուծությունը» տեղադրվեց արդյունաբերության մեջ մեր ընկերներից վրոմանց դուր յեկավ: Այդ գործը կատարելու համար կազմվել էր վնասարարների ու քայլադրողների յուրահատուկ մի միություն: Լավ է, վոր մենք արագորեն ուղղեցինք այդ անհեթեթությունը:

Կուսակցությունը վճռական պայքար է ծավալել փրկել ֆունկցիոնալ սխտեմի դեմ բոլոր բնագավառներում, և, անտաքակույս, նա այդ ճիշտ է արել:

Տրոցկիստական և այլ տարրերի մերկացված գիլիերսիոն, լրոտեսական-վնասարարական աշխատանքի փաստերի կապակցությունը բացահայտվեցին մեր տնտեսական ապարատի շատ թերություններ:

Այսպես՝ այժմ պարզ է, վոր տրոցկիստական վնասարարները, գիլիերսաններն ու լրոտեսները շատ բանում հոգուտ իրենց հանցավոր շահերի էլին ոգտադրծել մեր տնտեսական որոշումներում միանձնյա ղեկավարության սկզբունքի բյուրոկրատիկ

խեղաթյուրումները: Համկ(բ)կ Կենտկոմի պլենումի բանաձևն այդ առթիվ ասում է.

«Միանձնյա ղեկավարության սկզբունքի բյուրոկրատիկ խեղաթյուրումները, վորոնք հանգում են այն բանին, վոր շատ տնտեսական ղեկավարներ միանձնյա ղեկավարության հիման վրա իրենց միանգամայն ազատ են համարում մասսաների հասարակական կարծիքի ու շարքային տնտեսական աշխատողների վերահսկողությունից, չեն ունկնդրում տնտեսական-արտադրական ակտիվի ձայնին, կարևոր չեն համարում հնարել այդ ակտիվի վրա, կտրվում են ակտիվից և դրանով իսկ իրենց դրկում են ակտիվի աջակցությունից՝ թերություններն ու բացերը հայտարարելու և վերացնելու գործում, վորոնք թշնամիների կողմից ոգտադրծվում են իրենց գիլիերսիոն աշխատանքի համար»:

Այս շատ կարևոր ցուցում է: Չի կարող լինել վրոչ մի պայքար դրասենյակային-բյուրոկրատական մեթոդների դեմ, յեթե մենք անցնենք միանձնյա ղեկավարության սկզբունքի այդոքինակ աղավաղումների կողքով:

Տնտեսական ղեկավարությունն արմատապես բարելավելու նպատակով կուսակցությունը մատնացույց է անում արտադրական-տնտեսական ակտիվները, վորպես ղեկավարների կարևորագույն հենարան: Տնտեսական ղեկավարությունն այն աստիճան բարդացել է, տնտեսական ղեկավարների պարտականություններն այն աստիճան ընդարձակվել են, վոր այդ գործը գլուխ բերել առանց ակտիվի ոգնության, առանց նրա աջակցության-անհնարին է: Լավ տնտեսավարներն այժմ էլ գիտեն այդ և ակտիվի մեջ տեսնում են իրենց հավատարիմ հենարանը:

Մենք կողմնակից ենք միանձնյա ղեկավարման սկզբունքի հաստատուն կիրառման, բայց մենք չենք կարող հաշտվել այդ սկզբունքի այնպիսի ըմբռման հետ, յերբ ղեկավարն իրեն հակադրում է իր մյուս աշխատողներին, յերբ նա իրեն ազատ է համարում մասսաների և շարքային տնտեսավարների հասարակական վերահսկողությունից, կտրվում է ակտիվից և արհամարհում է նրան, փոխանակ ակտիվի ոժանդակության մեջ իր հիմնական հենարանը տեսնելու: Բարձրացնել ակտիվները տնտեսական որոշումներում ու ձեռնարկություններում, ներդրավել դրանց մեջ վրոչ միայն կուսակցական, այլև անկուսակցական ակտիվիստներին-այս հանդիսանում է մեր տնտեսական աշխատանքի բարելավման կարևորագույն խնդիրներից մեկը, հետագա լուրջ հաջողությունների վստահելի յերաշխիքներից մեկը: Ղեկավարներից ով չհասկանա այս բուլլետիկյան դրույթը, նա կմնա իրադար-



ձուլթյունների պոչում, գերի կմնա հետամնացներին ու բյուրոկրատացածներին: Տնտեսական-արտադրական ակտիվները մեղ կողմեն ավելի արագ առավ շարժելու ամբողջ աշխատանքը, նրանք կբացահայտեն շատ բացեր, կողմեն մերկացնելու և հեռացնելու տրոցկիստ և այլ վնասարարներին: Այդ ակտիվները ճիշտ կվարվեն, յեթե չխնայեն մի քանի փրուն հեղինակությունները, ինչպես նաև առավ քաշեն գործը բոլլեիկորեն առավ մղելու ընդունակ բավական թվով նոր մարդիկ: Ջախջախել տրոցկիստներին ու այլ վնասարարներին և առավ քաշել նոր, ընդունակ, խորհրդային իշխանությանը նվիրված աշխատողներ—սրանք միևնույն խնդրի յերկու կողմերն են:

Մեր տնտեսավարներն այս խնդիրը գլուխ վերեն, յեթե ավելի հաճախ վերհիշեն ընկեր Ստալինի այն ցուցումը, թե ինչ է պահանջվում նոր ձևով ղեկավարություն կազմակերպելու համար: Ընկեր Ստալինը տնտեսավարների 1931 թվականի ամսույա խորհրդակցության մեջ այլ ցուցումների թվում ընդգծեց այսպիսի մի ցուցում.

«Ապա անհրաժեշտ է, վոր միավորումների նախագահները և նրանց տեղակալներն ավելի հաճախ շրջագայեն գործարանները, ավելի յերկար մնան այնտեղ աշխատելու, ավելի լավ ծանոթանան գործարանային աշխատողների հետ և վոչ միայն սովորեցնեն տեղական մարդկանց, այլև սովորեն նրանցից: Կարծել, թե այժմ կարելի յե ղեկավարել գրասենյակից, գրասենյակում նստած, գործարաններից հեռու, —չափանկում է մուրթության մեջ ընկնել: Գործարանները ղեկավարելու համար հարկավոր է ավելի հաճախ շփում ունենալ ձեռնարկությունների աշխատողների հետ, հարկավոր է կենդանի կապ պահպանել նրանց հետ»:

Ժամանակն է հասկանալու, վոր առանց ինքնաքննադատության և քննադատության դարձացման մենք լուրջ արդյունքների չենք հասնի բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարում: Այդ գործում տեղի ունեցող չարաչառումների դեմ մենք բախկանաչափ միջոցներ ունենք: Բայց մասսաների և շարքային տնտեսական աշխատողների կողմից հանդես բերվող քննադատության դարձացումը դեռ չի կարողացել քիչ թե շատ եյական նոր նվաճումներ ձեռք բերել, և ահա մի քանի ընկերներ արդեն պատրաստ են նահանջի դիմելու:

ՀամԿ(բ) կենտկոմի Պլենումի հենց նախորդակին ընկեր Ուրլոնիկիձեյի անուամով մի նամակ ստացվեց Դնեպրոպետրովսկի մետալուրգիական գործարանի ղերեկտոր՝ ընկեր Բիրմանից: Ահա թե ինչպես է սկսվում ընկեր Բիրմանի այդ նամակը.

«Մանավանդ վերջին ժամանակներս այստեղ, Դնեպրոպետրովսկում, ստեղծվող կացությունն ինձ հարկադրում է դիմել Ձեզ, վորպես ավագ ընկերոջ, վորպես Գաղբյուրոյի անդամի՝ ցուցումներ և աջակցություն ստանալու համար:

Ինձ թվում է, վոր բարձրագույն կուսակցական ինստանցիաների գերեկտիվը՝ քննադատությունն ու ինքնաքննադատությունն ամեն կերպ ծավալելու մասին, այստեղ՝ Դնեպրոպետրովսկում վորոշ չափով սխալ է հասկացվել: Ոտար ծագում ունեցող «КРИТИКА» (քննադատություն) բառն այստեղ հաճախ շփոթում են ուսերեն «КРЕПАТЬСЯ» (չատախոտություն անել) բառի հետ: Յեռ կարծում եմ, վոր կուսակցության ղերեկտիվի նպատակն է՝ բարեխիղճ քննադատության միջոցով յերևան բերել իսկական թշնամիներին, բանալ իսկական թերությունները: Իսկ այստեղ չատերը հասկացել են, թե հարկավոր է ինչ էլ վոր լինի՝ ցեխի մեջ թախել միմյանց, բայց առաջին հերթին՝ ղեկավար աշխատողների վորոշ կատեգորիան:

Ղեկավար աշխատողների այդ վորոշ կատեգորիան են հանդիսանում առաջին հերթին տնտեսավարները, խոշոր գործարանների գերեկտորները, վորոնք խորհրդավոր մոգական դավադանի մի շարժումով դարձել են ինքնաքննադատության այդ մասի կենտրոնական նշանակետը: Հաստատված է, վոր կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական աշխատանքը մոռանալը հիմնական պատճառներից մեկն է այն ամենի, ինչ տեղի յե ունեցել: Սակայն մարդային կուսակցական ակտիվի հենց նոր տեղի ունեցած յեռորդա նիստում բավական թվով կուսակցական աշխատողների ունեցած յելույթներում փոխանակ իսկական ինքնաքննադատության, այնպես դուրս յեկավ, թե բոլոր չարիքների պատճառը տնտեսավարներն են»:

Ձի կարելի ժխտել, վոր ընկեր Բիրմանն իրավունք ունի պաշտպանվելու սխալ քննադատությունից: Ըստ յերևութին նա վորոշ հիմք ունի քննադատելու կուսակցական աշխատողներից վրմանց յելույթները:

Նամակից յերևում է, վոր Դնեպրոպետրովսկի մի քանի կուսակցական աշխատողներ վորձում են քննադատությունը միապողմանի կերպով ուղղել գործարանի ղեկավարության դեմ, տնտեսավարների դեմ: Դրան վոչ մի կերպ չի կարելի համաձայնել: Սակայն ընկեր Բիրմանն ընկնում է մի այլ միակողմանիության մեջ. նա սխալ է համարում բոլոր թերությունները բարդել տնտեսական աշխատողների վրա, բայց դժբախտաբար ինքը չի ուղղում խոսել տնտեսավարների թերությունների մասին և թերություններ է տեսնում միմիայն կուսակցական աշխատողների գործունեյության մեջ: Այդ սխալ դրույթ է, մեր դրույթը չէ: Այդ միակողմանի դերատեսչական դրույթ է, վորը մենք չենք կարող պաշտպանել:



Մենք կողմնակից ենք, վոր ամեն կերպ ողնենք մեր տնտեսա-  
վարենքին իրենց աշխատանքում, չբարդենք նրանց վրա ուրիշ  
հանցանքը, բայց և չկոծկենք նրանց թերությունները: Կարծես  
այժմ, յերբ մերկացվեցին այդքան վնասարարներ, դիվերսանտ-  
ներ ու լրտեսներ տնտեսական ապարատում, վորոնց մենք աչ-  
քից փախցրել եյինք, շատ ժամանակին և քննադատել մեր տըն-  
տեսավարներին, վորպեսզի բարձրացնենք նրանց աշխատանքը,  
բարելավենք նրանց աշխատանքի մեթոդները: Բայց այդ չի  
նշանակում, թե հարկավոր և զանց առնել կուսակցական  
աշխատողների, կուսակցական ղեկավարների պակասություննե-  
րը, վրիպումներն ու սխալները: Պետք և քննադատել  
թե՛ առաջնորդներին, թե՛ յերկրորդներին, ուղղելով նրանց  
սխալները: Մեր ապարատում բացված խոցերը, վորտեղ թաղնվել  
եյին ոտարեկրկյա հետախուզությունների արողկիստական և այլ  
գործակալներ, բաժանանալու հաստատում են այն, վոր քիչ թե-  
րություններ չկան ինչպես տնտեսական, այնպես և կուսակցական  
գործիչների աշխատանքում: Մենք բոլորս պետք և ձգենք մեզ  
տնտեսական ու կուսակցական, ասենք նաև պրոֆմիլութենական  
աշխատանքում, վորի մասին քիչ ենք խոսում, բայց բնավ վոչ  
այն սրտաճառով, վոր այնտեղ գործը լավ և:

Այժմ՝ կատարման ստուգման մասին: Պետք և ուղղակի ա-  
սել, վոր ավելի լավ և՛ պակաս կարգադրություններ լինեն, ա-  
վելի պակաս թղթե «ոպերատիվություն», բայց ավելի շատ վո-  
րոշումների ու կարգադրությունների կատարման ստուգում:  
Այնինչ կատարման ստուգումը կազմակերպելու բնագավառում  
մենք շատ մեղքեր ունենք:

Վերջերս մենք ուսանելի որինակ ունեցանք Անտառժողովոմա-  
տում:

Անանը Կենտրոնական Կոմիտեն դումարեց փայտ մթերողնե-  
րի խորհրդակցություն՝ այդ գործը բարելավելու նպատակով:  
Այդ ճիշտ զուգադիպեց ընկեր Իվանովի՝ Անտառային արդյունա-  
բերության ժողովմ նշանակվելու հետ: Խորհրդակցությանը բա-  
ցահայտվեցին շատ թերություններ: Դրանցից մեկը հատկապես  
աչքի ընկավ: Պարզվեց, վոր Անտառժողովոմատի ղեկավար աշ-  
խատողները չգիտեն կամ չեն հիշում, — չգիտեմ թե վորն և ա-  
վելի լավ, — կուսակցության ու կառավարության այն կարևո-  
րագույն վորոշումները, վորոնք վերաբերում են իրենց աշխա-  
տանքին: Այսպես, խորհրդակցությանը յերկար ժամանակ

քննարկվեց փայտ մթերողներին բանվորական ուժով ասպնոմե-  
լու համար կոլտնտեսությունների հետ պայմանագիր կնքելու  
հարցը: Ընդամին փայտ մթերողներն անհամարձակ կերպով մո-  
տենում եյին այն հարցին, թե անհրաժեշտ և պայմանագրեր  
կնքել վոչ թե ամբողջ կոլտնտեսությունների հետ, ինչպես ար-  
վում ևր սովորաբար, այլ առանձին կոլտնտեսականների հետ:  
Միմիայն խորհրդակցության վերջում հաջողվեց պարզել, վոր  
այդ հարցին՝ առանձին կոլտնտեսականների հետ պայմանագրեր  
կնքելու նպատակահարմարության հարցին, դրական լուծում են  
տվել կուսակցությունն ու կառավարությունը դեռ անցյալ տար-  
վա սկզբներին: Պարզվեց, վոր ընկեր անտառագործները մոռա-  
ցել են այդ վորոշումը, մինչդեռ դա առաջնակարգ նշանակու-  
թյուն ունի կոլտնտեսությունների միջոցով կատարվող փայտա-  
մթերման աշխատանքի հին, կիսատնայնագործական մեթոդներից  
ինդուստրիալ մեթոդների անցնելու համար, հենվելով սեփական  
մշտական վորակյալ կադրերի վրա: Կարելի՞ չե արդյոք սպասել  
փայտ մթերողների աշխատանքի լուրջ բարելավում, յեթե նը-  
րանք «մոռանալու յեն» այն, ինչ վճռական նշանակություն ու-  
նի իրենց աշխատանքում: Իսկ յեթե այդպես արագորեն են «մո-  
ռացվում» կարևորագույն վորոշումները, ապա ի՞նչ կատարման  
ստուգման մասին կարելի չե խոսել այստեղ: Բայց չե՞ վոր այդ  
հանդիսանում և տնտեսական ղեկավարների անհոգության ու ան-  
պատասխանատվության շատ ցուցանիշներից միայն մեկը:

Այնուհետև վերցնենք Խորհրդատվորդկոմատում դոյություն  
տնեցող դրությունը: Վերջերս Ժողովոմխորհը և Խորհրդային  
Վերահսկողության Հանձնաժողովը մի նամակ ստացան Խորհ-  
տնտեսությունների ժողովոմի տեղակալ՝ քաղվարչության պետ  
ընկեր Սոմաից: Ժողովոմի տեղակալ ընկեր Սոմսը գրում և հե-  
տևյալը.

«Խորհրդատվորդկոմատի կենտրոնական պլանային-ֆինանսական բաժ-  
նից՝ հակահեղափոխական տրոցկիստական աշխատանքին մասնակցելու  
համար Ներքործժողովոմատի կողմից ձեռքակալվել են կենտրոնական  
պլանային-ֆինանսական բաժնի պետ ընկեր Մայստրովոյի և միաժամա-  
նակ հավաքական պլանավորման սեկտորի պետի տեղակալ Պրեորբաթենս-  
վին, կենտրոնական պլանային-ֆինանսական բաժնի խմբակի կուսկազմա-  
կերպիչ Բարմինը և հացահատիկային խորհրտնտեսությունների խմբի պետ  
Պուչինը (անկուսակցական)»:



Այս աշխատանքն էլ դրադետ չի գրված և պարզապես աշխատանքն էլ հասկանալի չէ, բայց ընկեր Սոման այս խոսքերից յեզրակացնում է, վոր՝

«Կարելի չէ յենթադրել, թե խորհրդակցության կենտրոնական պլանային-ֆինանսական բաժնում—վերոհիշյալ հակախորհրդային անձների աշխատանքի ընթացքում վնասարար աշխատանք է կատարվել խորհրդակցության խոսքերի համար ֆինանսական ծանր դրուժյուն ստեղծելու նպատակով»:

### Յեւ պալ՝

«Նույնը եմ ձեզ նշանակել խորհրդակցության կենտրոնական պլանային-ֆինանսական բաժնի աշխատանքի ու գործերի հատուկ քննություն՝ ստուգելու Պրեզիդենտի, Բարմինի, Պուշկինի և այլ աշխատողների կողմից խորհրդակցության ֆինանսների ասպարիզում հավանաբար կատարված վնասարարական աշխատանքը»:

Ժողովում տեղակալ ընկեր Սոման, փոխանակ ժողովում հետ միասին իր ապարատի մաքրման գործին ձեռնամուխ լինելու, ուզում է այդ գործը բարդել ուրիշների վրա: Իր պարտականություններին այդպես վերաբերվելուց անպատասխանատվության հոտ է գալիս, այն էլ մեծ չափով: Անհասկանալի չէ նաև ժողովում ընկեր Կալանովիչի բարեհոգի վարքագիծը, վորն ընդհանրապես լուրջ չէ և պահպանում այդպիսի դեպքերում: Արդյոք ժամանակը չէ՞, վոր նրանք—ժողովում և իր տեղակալը—իրենք դբարվեն իրենց ապարատը մաքրելու գործով: Ել ինչո՞ւ յեն նրանք նստած աշխատել:

Ժամանակն է, վոր կոմունիստ ղեկավարները հասկանան, թե իրենք պատասխանատու չեն իրենց ապարատի համար, այն ստուգելու, աշխատանքին համապատասխան ուղղութիւն տալու կարողութեան համար: Չի վարելի ապարատն ստուգելու պարտականութիւնը բարդել ներքեւոր ժողովակցության կամ խորհրդային վերահսկողութեան հանձնաժողովի վրա, կամ վորևէ այլ օրդանի վրա: Այդպես կարող են վարվել անպատասխանատու չինողները, բայց վոր բոլորիկները, վորոնց համար թանգ է գործը, վորոնք աշխատանքում չեն ծուլանում, վորոնք կապ ունեն իրենց ակտիվի հետ:

Տնտեսական աշխատանքի մեթոդները բարելավելու համար մեծ նշանակություն ունի Կենտրոնի պլենումի մի ցուցումն ևս, վորն ասում է, թե անհրաժեշտ է ապահովել ձեռնարկութիւնը տեխնիկական կանոններով ու հրահանգներով:

Վերջին տարիներս մեր գործարաններն ու ֆաբրիկաները շատ բանով վերասարքավորվել են ու նոր են կառուցվել: Այլևս չի կարելի հին ձևով աշխատել: Հարկավոր է, վոր արտադրական կյանքում խիստ վարդ ու կանոն լինի, վոր ցեխերում տեխնիկական կանոններ ու հրահանգներ լինեն, վոր այդ կանոններն ու հրահանգները լավ գիտենան համապատասխան աշխատողները, վոր ինժեներները հրահանգներ տան նրանց ամենորոյա աշխատանքում, վոր այդ ամբողջ աշխատանքն ստուգվի ղեկավարի ու իր ոգնականների կողմից: Մեր ձեռնարկութիւններում կան շատ նոր դադեյահներ, մեքենաներ, տեխնիկական սարքավորում և այլն: Այդ նոր սարքավորումներ չի կարելի աշխատել՝ առանց համապատասխան տեխնիկական կանոններն ու հրահանգները գիտենալու, առանց ամենորոյա կենդանի հրահանգներ տալու բան վորներին՝ այդ կանոններն ու հրահանգները կիրառելու գործում, առանց այդ գործը լրջորեն կազմակերպելու: Արտադրութեան անկողնուրակին վերաբերմունք ցուցաբերելու հանգամանքով միայն վարելի չէ բացատրել այդ գործի անտեսումը:

Չպետք է մոռանալ նաև այն, վոր մեր թշնամիները—արդար կիստ է այլ վնասարարները—ոգտվում են յուրաքանչյուր անկանոնութիւնից, վորպեսզի խանգարեն արտադրութիւնը, վնասեն բանվոր դասակարգին: Յեւ այստեղ պետք է հիշել Լենինի այն ցուցումները, թե ինչպես պետք է պայքար մղել սաբոտաժ անողների և վնասարարների դեմ: Դեռ 1919 թվականին Լենինը «Կոլ-չակին հաղթելու առթիւ բանվորներին ու գյուղացիներին ուղղած նամակում» սաբոտաժ անողների և խորհրդային իշխանութեան ամեն տեսակ թշնամիների մասին գրում էր.

«Աշխատավորների այդ թշնամիների, կալվածատերերի, կապիտալիստների, սաբոտաժ անողների, սպիտակների նկատմամբ պետք է անողորք լինել»:

Իսկ նրանց բռնել կարողանալու համար պետք է լինել հմուտ, զգուշ, ղեկավար, պետք է ամենաուղիղ կերպով հետևել անդամ նվազագույն անկանոնութեանը, խորհրդային իշխանութեան որոշումների բարեխիղճ կատարումից նվազագույն չափով շեղվելու: Կալվածատերերն ու կապիտալիստներն ուժեղ են վոր միայն իրենց գիտելիքներով և իրենց փորձով, վոր միայն աշխարհիս ամենահարուստ յերկիրների կողմից ցույց տրվող ոգնություններ, այլև լայն մասսաների սովորութեամբ ու խավար լինելու պատճառով, մասսաներ, վորոնք ուզում են ապրել «հին ձևով» և չեն հասկանում, վոր անհրաժեշտ է խստիվ ու բարեխիղճորեն պահել խորհրդային իշխանութեան օրենքները:

Ամենափոքր ապօրինութիւնը, խորհրդային կարգի նվազագույն



ների, ծառայողների ու ինժեներների ամբողջ կողմից, վորոնց մասին, իհարկե, չի կարելի ասել, թե վնասաբարենրի հետ համախոհ են: Վերջապես, այդ նշանակում է, վոր մեր շատ պլանները ցածր են: Յերբ մենք արդյունաբերության մեջ հիմնավորապես արմատախիլ անենք տրոցիկոտական—վնասաբարական խմբակները, անշուշտ ել ավելի արագ առաջ կընթանանք, քան մինչ այժմ: Նշանակում է՝ պլանների գերակատարման այն կեղծ վատարկումը, վորն առաջ է քաջվում վնասաբարական դործերը կոծկելու համար, չի կարելի պաշտպանել, այլ պետք է մերկացնել, ինչպես ամեն մի այլ կեղծարարություն:

Մյուս կողմից, շատ աշխատողներ այժմ վործում են իրենց բոլոր մեղքերը բարդել վնասաբարների վրա: Վորտեղ ել վոր մի բան մատ լինի, կասեն՝ վնասաբարն է մեղավոր: Միքանի անձար աշխատողներ յայդ շատ հարմար կիթվա: Կզանվեն բյուրոփրատներ, վորոնք կաշխատեն այդ պրիմով իրենցից հեռացնել հարվածը: Սակայն դրա հետ վոչ մի կերպ չի՝ կարելի հաշտվել: Այդ վործերին պետք է հակադրել վատտերի լուրջ ստուգումը, սխալը վնասաբարությունից անպայման ջոկելու կարողությունը: Միմիայն այդ գեպքում մենք իրենց տեղը ցույց կտանք բյուրոփրատներին, և վիճաբանք մեր կազմակերպություններն ամեն դույնի վնասաբարներից ու գիվերտանտներից:

Կան նաև այնպիսի վաճառականներ, վորոնք ժամանակին չեն կարողացել պայքար մղել վնասաբարներին մերկացնելու համար, իսկ այժմ անընդունակություն են ցուցաբերում հասկանալու իրենց պարտականությունները՝ բացահայտված վնասաբարության հետևանքները վերացնելու ուղղությամբ: Այլ կերպ ի՞նչպես կարելի չէ հասկանալ այն ընկերներին, վորոնք պատրաստ են այժմ վնասաբարության հետևանքների վերացման համար մղվող ամբողջ պայքարը սահմանափակել ստախանովյան շարժման դարգացման վերաբերյալ խոսակցություններով: Ինչ խոսք, վոր մեր արդյունաբերության հետագա առաջխաղացումն առանց ստախանովականների մենք չենք պատկերացնում: Բայց հո չի՞ կարելի սեփական քաղաքական ու գործարար մեղքերը բարդել ստախանովականների վրա, հո չի՞ կարելի թաղնվել նրանց թիկունքում: Ավելի լավ է աղնվորեն խոստովանել սեփական վրիպումներն ու թերությունները և բոլշևիկորեն ուղղել դրանք, վերացնել մինչև վերջը: Վոր ստախանովականները դոչաղ են և իրենց խնդիրը

վատ չեն կատարում—այդ հայտնի չէ յուրաքանչյուրին: Բայց վոր շատ ղեկավարներ իրենց քաղաքական անհողությամբ չնկատեցին վնասաբարներին, իսկ այժմ վործում են արդարանալ, լավ խոսքեր ասելով ստախանովականների մասին—այդ ևս ճիշտ է: Մենք չպետք է անցնենք այդ սխալի կողքով, թեկուզ միայն այն պատճառով, վոր այդ կարող է մեծ վնաս հասցնել նաև հենց ստախանովյան շարժմանը: Ձի կարելի մոռանալ, վոր ստախանովյան շարժման հաջողությունները շատ մեծ չափերով կախված են ցեխի, ձեռնարկության և վերագաս ողջանների ղեկավարի աշխատանքից: Ստախանովյան շարժման հետագա հաջողություններն ապահովելու համար մենք պետք է վոչ թե խոսքով, այլ գործնականում հող ստանենք մեր տնտեսական ղեկավարների աշխատանքի մեթոդները բարելավելու մասին, տնտեսական ղեկավարության մեջ կեղծ ճեղքերը վերացնելու մասին: Առանց այդ բանի գործը չես շտկի:

Վերցնենք թեկուզ Դոնբասը, վորին պատկանում է ստախանովյան շարժման նախաձեռնությունը: Մի՞թե պարզ չէ, վոր Դոնբասի աշխարհյունաբերության այժմյան ձախողման պատախանատվությունը ընկնում է վոչ թե ստախանովականների վրա, վորոնք պատրաստ են իրենց գործը կատարելու վոչ վատ, քան առաջ, այլ այն ղեկավարների վրա, վորոնք այժմ չեն արդարացնում մեր հույսերն արտադրական ծրագրի կատարման գործում: Վորքան ել տխուր է այս, բայց Դոնբասում 1937 թվականի հունվար և փետրվար ամիսներին ավելի պակաս քարածուխ են տվել, քան 1936 թվականի հունվարին և փետրվարին: Մի՞թե այդ բանում մեղավոր են ստախանովականները: Մի՞թե վորեն մեկը մեղադրում է Դոնբասին այն բանի մեջ, թե այնտեղ սպառվել են բանվոր ստախանովականները: Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող: Բայց վոր մեր տնտեսական աշխատողները Դոնբասում չկարողացան կատարել իրենց խնդիրը, վոր նրանք չկարողացան ապահովել արտադրության ու ստախանովյան շարժման պատշաճ կազմակերպումը, վոր նրանք չկարողացան ստախանովյան շարժման վերելքն ողտադործել հետագա առաջխաղացման համար և նույնիսկ հետ գլորվեցին—այդ պարզ է, այդ անվիճելի չէ: Նշանակում է՝ չի կարելի, վոր տնտեսական ղեկավարները թաղնվեն ստախանովականների թիկունքում, այլ ավելի լավ է համարձակորեն բացահայտեն ղեկավարության թերությունները և ավելի արագ շտկեն գործը:



Սոցիալիստական շինարարութեան հաջողութիւնները կլինեն—  
յին եւլ ավելի խոշոր, յեթե մենք ավելի լավ պայքարեցինք մեք  
անտեսական աշխատանքի թերութիւններէ դեմ, յեթե մենք ա—  
վելի լավ դատարարակեցինք մեր կադրերը, ավելի լավ կազմա—  
կերպեցինք աշխատողներէ ընտրութիւնը, ավելի վճռականորեն  
արձատարել անեցինք դրասենյակային—բոլորովրատական տար—  
րերը անտեսական աշխատանքում:

Բուրժուական վնասարարների, դիվերսանտների ու լրտեսնե—  
րի կողմն անցան կուսակցութեան դավաճանները—սորոցկիւստներն  
ու աջերը: Բայց նրանք վոչ ալ ինչ են, յեթե վոչ բուրժուական  
հասարակութեան նեխող տականքներ: Մեր շարքերն են ներհո—  
սում նոր հազարավոր բարձրորակ և խորհրդային իշխանութեանը  
նվիրված մասնագետներ: Ստախանովականների բանակի աճումն  
արտացոլում է ամբողջ բանվոր դասակարգի մեծ վերելքը:

Թե մեր հաջողութիւնները վորքան շատ են կախված հենց  
մեզնից, աշխատանքը բարձրացնելու մեր ցանկութիւնից՝ այդ  
մենք գիտենք շատ ուրիշակներով: Դրանց մեջ ամենապայծառ  
որինակներից մեկը սե մետալուրգիայի վերելքն է վերջին տարի—  
ների ընթացքում: Շնորհիւ ընկեր Ուրշոնիկիձեյի բացառիկ ու—  
շադրութեան, սե մետալուրգիան վոչ միայն կատարեց յերկրորդ  
հնգամյակը չորս տարում, այլև սվեց հնոցների ու մարտեյան  
վստարանների այնպիսի տեխնիկական ցուցանիշներ, վորոնք  
գերադանցեցին հնգամյակի ուրվագծումները: Մեր հնոցներն ա—  
ռաջին հնգամյակի սկզբին իրենց ողտադործման գործակիցը բա—  
բելավեցին ավելի քան 70 տոկոսով: Նույն ժամանակամիջոցում  
մարտեյան վստարանների պողպատի յելուստը հատակի մեկ  
քառակուսի մետր տարածութիւնից՝ աճեց 56 տոկոսով:

Ամբողջ արդյունաբերութեան մեջ աշխատանքի արտադրո—  
ղականութեան աճումն այժմ ընթանում է ավելի արագ, քան ան—  
ցյալ տարիներում. նոր տեխնիկայի յուրացումն սկսել է առաջ  
ընթանալ ավելի արագ—ահա մեր նոր մեծ հաջողութիւններէ  
յերաշխիքը:

Պետք է սակայն հիշել, վոր տեխնիկայես առաջավոր կապիտ—  
ալիստական յերկրներին հասնելու և նրանցից անցնելու խնդ—  
րերը մենք դեռ չենք իրականացրել: Մենք վոչ մի գեպքում  
չպետք է դուռդանանք: Դեռ անհրաժեշտ կլինի շատ աշխատել  
այդ խնդրի կատարմանը հասնելու համար:

Վնասարարներին, դիվերսանտներին, լրտեսներին և այլ գաղ—

ջելիներին արդյունաբերութեան միջից և ամբողջ պետական ա—  
պարատից արձատարել անելն այդ գործի արագացման կարեւո—  
րագոյն նախադրայններից մեկն է:

Տրոցկիստների և նրանց բոլոր դաշնակիցների վնասարարա—  
կան—դիվերսիոն—լրտեսական գործունեյութիւնը վիկայում է, վոր  
նրանք, իրենց թուլութեան հետեանքով, այլևս չեն կարող բացա—  
հայտ պայքարի դուրս գալ խորհրդային իշխանութեան դեմ:  
Յերկերեսանիութեան մութ կածաններով են նրանք շրջում վոչ  
այն պատճառով, վոր չեցին ցանկանա բացահայտ հարձակում  
գործել սոցիալիզմի և նրա կառուցողների վրա, այլ վորովհետե  
սոցիալիստական հասարակարգի ուժերն անչափ ավելի յեն  
սոցիալիստական հասարակարգի ուժերն անչափ ավելի յեն  
նրանք վախենում են լույսից և այդ պատճառով ել ասլորում են  
վորպես յերկերեսանիներ, խորհրդային իշխանութեան նկատմամբ  
լոյալութեան և նույնիսկ նվիրվածութեան դիմակ հագնելով:

Բայց այն փաստը, վոր մի շարք տարիների ընթացքում նրանք  
կարողացել եցին աննկատելի մնալով կատարել իրենց դավաճա—  
նական—քայքայիչ աշխատանքն արդյունաբերութեան մեջ և շատ  
այլ ուղղաններում, պատասխանատու պոստերում, ցույց է տա—  
լիս, թե վորքան ուժեղ են մեր միջավայրում վտանգավոր ինք—  
նահանգստացումն ու քաղաքական անհոգութիւնը: Չի կարելի  
հաշտվել մանավանդ այն մարդկանց այդպիսի քաղաքական կար—  
ճատեսութեան հետ, այդպիսի վտանգավոր անհոգութեան  
հետ, ովքեր ղեկավար պոստերի յեն կոչված: Այսպիսի  
գեպքերում քննադատութիւնից վախենալը և ինքնաքննա—  
դատութեան համար անընդունակ լինելը հանցագործութիւն  
է: Քանի դեռ մեր միջավայրում կա թեկուզ մեկ յերկերեսանի—  
վնասարար, չի՛ կարելի մոռանալ վտանգը, չի՛ կարելի հանգըս—  
տանալ, չի՛ կարելի միթարվել այն բանով, վոր մասսաները  
մեզ հետ են: Մենք կկորցնեցինք բոլշևիկ կոչվելու իրավունքը,  
յեթե այդպիսի հետեութիւններ չանեցինք յերկերեսանիների  
պայքարի նոր, վտանգներով հղի պրիմներից:

Ճապիւն—գերմանական—սորոցկիւստական գործակալների վնա—  
սարարութեան, դիվերսիայի ու լրտեսութեան մերկացումն ընդ—  
գծեց կապիտալիզմի և սոցիալիզմի միջև տեղի ունեցող պայքա—  
րի սրութիւնն ու լրջութիւնը մեր ժամանակներում: Թշնամի  
դիմում է սոցիալիզմի դեմ պայքարելու բոլոր միջոցներին: Ան—  
կայուն կոմունիստների յերեկվա տատանումներն արդեն վերած—



վել են վնասարարության, դիվերսիայի ու լրտեսության ակտե-  
րի, վորոնք համաձայնեցված են Փաշխատների հետ, կատարվում  
են հողուտ նրանց շահերի: Մենք պարտավոր ենք հարվածով  
պատասխանելու հարվածին, մեր ճանապարհին ամենուրեք ջախ-  
ջախելու Փաշիզմի բանակին պատկանող այդ լրտեսների ու քա-  
ջախիչների ջոկատները: Մենք դիտենք, վոր այս համապատաս-  
խանում է վոչ միայն մեր յերկրի աշխատավորների, այլ ամբողջ  
աշխարհի բանվորների շահերին ու ցանկություններին:

Դեռ յերեկ մենք չեյինք յենթադրում, վոր նախկին Վոմու-  
նիստ մեր հակառակորդները գլորվել են մինչև վերջին գիծը,  
վոր նրանք կղեմեն ամեն մի դավաճանության ու մատնության՝  
իրենց հայրենիքի նկատմամբ: Այսօր, այսքան մերկացումներից  
հետո, մենք ճանաչում ենք նրանց իսկական դեմքը: Պայքարի  
ձևերի սրությունը վկայում է մեր թշնամիների դործի անհու-  
սալիության և նրանց հուսահատության մասին, բայց նաև այն  
մասին, վոր մենք պետք է ե՛լ ավելի բարձրացնենք հեղափոխա-  
կան զգաստությունը, սոցիալիստական կազմակերպվածություն-  
ներ, բոլշևիկյան գիտակցությունը: Այն ժամանակ տրոցկիստա-  
կան, բուխարինյան և այլ խմբերի ստոր աշխատանքի մերկա-  
ցումը կծառայի մեր հասարակարգի հետագա ամրապնդմանը  
և կապահովի սոցիալիզմի ե՛լ ավելի մեծ հաղթանակները մեր  
յերկրում:

Զարմանալի չէ, վոր մեր յերեկվա ուղեկիցներից վոմանք  
գնացին թշնամու բանակը, դարձան Փաշիզմի դործակալություն,  
դարձան հակահեղափոխության բանդիտներ: Մենք դեռ միակ  
սոցիալիստական յերկիրն ենք կապիտալիստական պետություն-  
ների ողակի մեջ: Մեր հաջողությունները մեծ են, բայց հենց  
գրանք են ավելի ու ավելի կատաղեցնում դասակարգային թըշ-  
նամուն, վորն այդ հաջողությունների մեջ տեսնում է իր կոր-  
ծանման մոտենալը: Բուրժուազիան, վորը տիրապետող դիրք է  
գրավում բոլոր յերկիրներում, բացի ԽՍՀՄ-ից, ամենևին մտա-  
դրություն չունի կամավոր կերպով հանձնելու իր գերքերը և  
իշխանությունը գիջելու բանվորներին:

Նա դեռ քիչ միջոցներ չի գտնում իրեն հնազանդ և իր դո-  
րության առջև ահի մեջ պահելու նրանց, ովքեր տոգորված են  
բուրժուական նախապաշարմունքներով և վարակված են անլու-  
սահությամբ աշխատավորների հեղափոխական ուժի նկատմամբ:

Իսկ այդպիսիները քիչ չեն առանձնապես մանր բուրժուազիայի  
մեջ:

Բանվորներին վաղուց ծանոթ են հեղափոխության բանակից  
թշնամու վոդմն անցնելու նման փաստերը: Այդպիսի փաստեր  
քիչ չգիտե սոցիալիզմի համար մղվող պայքարի պատմությունը:  
Հեղափոխական նոր խոշոր անցքերի մոտենալը, վորոնց հենա-  
բանն են հանդիսանում սոցիալիզմի հաջողությունները ԽՍՀ  
Միությունում, բոլոր յերկիրներում բարձրացնում է բանվորնե-  
րի վոգին, վորոնք բուռն կերպով ազատագրության են ձգտում,  
բայց նաև խուճապ է առաջացնում այն մարդկանց մեջ, վորոնք  
տոգորված են բուրժուական նախապաշարմունքներով և բանվոր  
դասակարգի ուժի նկատմամբ անլուսահությամբ են համակված:  
Տրոցկիստների ու բուխարինականների՝ բուրժուազիայի բանակն  
անցնելը, վնասարարների, դիվերսանտների, մարդասպանների ու  
լրտեսների բանդայի վերածվելը վկայում են հենց այդ մասին:

Մեզինց հեռացան նրանք, ովքեր անընդունակ են բուրժուա-  
զիայի դեմ պայքարելու, ովքեր գերադասում են իրենց բախտը  
կապել կապիտալիզմի, և վոչ թե բանվոր դասակարգի հետ:  
Մենք պետք է ուրախանանք այն բանի համար, վոր թշնամուն  
մերկացրինք այն մոմենտին, յերբ տեղի յե ունենում նոր մար-  
տերի նախապատրաստություն, մերկացրինք դեռ նախքան այդ  
մարտերն սկսվելը: Մենք պետք է շտապենք ավարտել այդ գոր-  
ծը, առանց հետաձգելու և առանց տատանումներ յերևան բերե-  
լու:

Խորհրդային Միությունը մրցում է կապիտալիստական սիս-  
տեմի հետ: Պայքարն ընդունում է ավելի ու ավելի խոշոր մաս-  
շտաբ: Այդ պայքարի սրության մասին վկայում են շատ կաղի-  
տալիստական յերկիրների վոդմից նոր պատերազմներ նախա-  
պատրաստելու համար ձեռք առնվող միջոցները: Այդ բոլոր  
տրոցկիստների և մյուսների վնասարարական շայկաներն ամենա-  
ակտիվ ջոկատներից մեկն են հանդիսանում այդ նախապատրաս-  
տության մեջ: Մոռանալ այդ, տարվել անհողությամբ—նշանա-  
կում է մոռանալ մեր առաջնակարգ պարտքը ժողովրդի հանդեպ,  
աշխատավորների հանդեպ:

Այդ մրցության մեջ հաղթելու համար մենք պետք է անչե-  
ղորեն առաջ ընթանանք, մենք պետք է մեր հաջողությունները  
չափենք վոչ թե նախապատերազմյան Ռուսաստանի չափանիշով,  
այլ ժամանակակից չափանիշներով: Քանի դեռ ժամանակ կա,



մենք պետք է ոգտադործենք յուրաքանչյուր մոմենտ՝ թույլ տեղամասերում մեզ ամրացնելու համար, առավել զարգացած կապիտալիստական յերկիրների աշխատանքի արտադրողականութեանը և տեխնիկական նորմաներին հասնելու համար: Պետք է ել ավելի ուժեղ կերպով ներդրակել մեր ամբողջ աշխատանքի մեջ աշխատավորների լայն մասսան, չարքային աշխատողներին, ակտիվը: Պետք է բարձրացնել կադրերի բուլճելիկյան դաստիարակութունը և բուլճելիկորեն կազմակերպել աշխատողներ ընտրելու գործը բոլոր կազմակերպութիւններում: Պետք է հաշիւ առնել, վոր թշնամին այժմ դիմում է ամեն միջոցի, ոգտադործում է պայքարի ամեն պրիում, խցկում է բոլոր ճեղքերի մեջ: Թշնամին ոգտադործում է նաև մեր կուսակցական սոմսը, վոր պեսզի խաբի մեզ, սողոսիի այնտեղ, վորտեղ նա ուրիշ կերպ մուտք չի կարող գործել: Կոմունիստի կերպարանք է ընդունում թշնամին այն բանի համար, վորպեսզի սողոսիի գեպի դեկավար պոստեր, տեսնելով, վոր ամբողջ դեկավարութիւնը բոլոր ճյուղերում գտնվում է կոմունիստների ձեռքում: Թշնամու մերկացումը և նրան սոցիալիզմ կառուցողների գործող բանակից դուրս վնդելը, մեր բանակի ուժեղացումը, մեր բանակի ուժերի բարձրացումը—նոր հաջողութիւնների յերաշխիքն է:

Ուստի մեզնից յուրաքանչյուրը պետք է հիշի վոմունիստի սրբազան պարտականութիւնը, ուժեղացնի իր բուլճելիկյան աշալլութիւնը, բարձրացնի կադրերի բուլճելիկյան դիտակցութիւնը: Գլխավորն այժմ կախված է մեզնից—բուլճելիկներից: Վորքան ավելի մենք՝ բուլճելիկներս հասկանանք մեր խնդիրը և անենք անհրաժեշտ հետեութիւններ, բուլճելիկյան հետեութիւններ, —այնքան ավելի կարողանա մեր առաջխաղացումը:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                             |    |
|-------------------------------------------------------------------------------------------------------------|----|
|                                                                                                             | Եջ |
| I. Վնասարարական փաստերը և վնասարարների դեմքը . . . . .                                                      | 5  |
| II. Մեր խնդիրները տրոցկիստական և այլ վնասարարների, դեվերսանտների ու լրտեսների դեմ մղվող պայքարում . . . . . | 27 |
| 1. Կադրերի դաստիարակութիւնը . . . . .                                                                       | 27 |
| 2. Աշխատողների ընտրութիւնը . . . . .                                                                        | 43 |
| 3. Ղեկավարման մեթոդը . . . . .                                                                              | 51 |





Թարգմ. Հ. Տ.-Հովհաննիսյան

Խմբ. Հ. Հովհաննիսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Պատ. սրբագրիչ Լ. Արովյան

---

Գլավիտի լիտոյը Ի—4889, հրատ. № 459,

Պատվեր № 113, տիրաժ 15.000, ինդեքս  $\frac{\text{П 84}}{\text{PK}}$

Հանձնվել է արտադրության 27/VI 1937 թ.

Ստորագրվել է ավագրության 11/VII 1937 թ.

Գինը 50 կոպ.

---

Հայկոսհրատի տպարան, Յերեկան, Ալանովերդյան 71



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

371

**В. М. МОЛОТОВ**

**УРОКИ ВРЕДИТЕЛЬСТВА, ДИВЕРСИИ И ШПИОНАЖА  
ЯПОНО-НЕМЕЦКО-ТРОЦКИСТСКИХ АГЕНТОВ**

Армпартиздат, Ереван, 1937